

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱՄ ՎԱՀԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

**ՍՏԱՏԻԿ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԱՍԱՐՔԵՐԻ
ԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՄՇԱԿՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Ե.27.01 «Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա»
մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

**Գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
տ.գ.դ., պրոֆ. Վ. Շ. Մելիքյան**

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....5

ԳԼՈՒԽ 1. ՍՏԱՏԻԿ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԱՍԱՐՔԵՐԻ ԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ.....10

1.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման անհրաժեշտությունը.....10

1.1.1. Ստատիկ կամայական ընտրությունը հիշասարքերի նախագծման անհրաժեշտությունը 10

1.1.2. Ստատիկ կամայական ընտրությունը հիշասարքերի կառուցվածքը 12

1.1.3. Ստատիկ կամայական ընտրությունը հիշասարքերի նախագծումը 20

1.1.4. Ստատիկ կամայական ընտրությունը հիշասարքերի խափանումները 27

1.2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման արդի վիճակի վերլուծությունը32

1.3. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցներին առաջադրվող պահանջները45

Եզրակացություններ.....46

ԳԼՈՒԽ 2. ՍՏԱՏԻԿ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԱՍԱՐՔԵՐԻ ԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ.....48

2.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման խնդրի դրվածքը.....48

2.2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման մեթոդների մշակումը49

2.2.1. Ստատիկ կամայական ընտրությունը հիշասարքերի տարրական բջիջների ընտրությունը 49

2.2.2. Բազմակի սնուցման դողերով ղեկավարվող ՍԿԸՅ 6S տարրական բջջի կիրառման առանձնահատկությունները և խնդիրները	54
2.2.3. Սնուցման դողերը ղեկավարող տրանզիստորների արդյունավետության բարձրացումը	58
2.2.4. Արագագործ նախալիցքավորման սխեմայի նախագծման եղանակների մշակումը	59
2.2.5. Ընթերցման և գրանցման համաձայնեցման ինքնաժամանակաչափ սխեմայի մշակումը	65
2.5. Առաջարկված մեթոդների համատեղ կիրառմամբ ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքի մշակումը.....	67
Եզրակացություններ.....	75
ԳԼՈՒԽ 3. ՍՏԱՏԻԿ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԱՍԱՐՔԵՐԻ ԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	77
3.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման համակարգը	77
3.1.1. Ծրագրային միջոցի կառուցման սկզբունքները	77
3.1.2. Համապիտանի հիշողության թարգմանչի նկարագրությունը	79
3.1.3. Համապիտանի հիշողության թարգմանչի կառուցվածքը ..	83
3.1.4. Ծրագրային գործիքի օգտագործողի ինտերֆեյսը	85
3.2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցի արդյունավետության գնահատումը.....	91
Եզրակացություններ.....	108
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ	109
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	111
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՆԵՐԴՐՄԱՆ ԱԿՏ.....	120
ՀԱՎԵԼՎԱԾ 2. «MTC» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ C++ ԿՈՂԻ ՈՐՈՇ ՀԱՏՎԱԾԸ	121
ՀԱՎԵԼՎԱԾ 3. «MTC» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ Perl ԿՈՂԻ ՈՐՈՇ ՀԱՏՎԱԾԸ	124

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՄՇԱԿՎԱԾ ԱՐԱԳԱԳՈՐԾ 64 ԲԱՌԻ և 8 ԲԻԹԻ ԳԾԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԻՇԱՍԱՐՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ	132
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	143
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	147
ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ.....	148

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը: Կիսահաղորդչային տեխնոլոգիաների առաջնթացը հանգեցրել է ինտեգրալ սխեմաների (ԻՍ) համակարգերի արագնթաց աճին ավելի լայնորեն կիրառվող հավելվածներում, ներառյալ բարձր արտադրողականությամբ հաշվողական և շարժական սարքերում, սպառողական էլեկտրոնիկայում, ինչպիսիք են եռաչափ խաղերը, խելացի հեռախոսները և բժշկական սարքավորումները:

Բավարարելու համար բարձր կատարողականությամբ և ցածր էներգասպառմամբ հավելվածների աճող պահանջարկը՝ հաճախ պահանջվում է ունենալ մեծ քանակությամբ ներկառուցված հիշասարքեր, որոնք կապահովեն համակարգում տվյալների բարձր թողունակությունը: Այդ համակարգում ներկառուցված հիշասարքերի տարատեսակները նույնպես դարձել են էլ ավելի բարդ՝ սկսած ստատիկ հիշասարքերից մինչև դինամիկը: Ներկառուցված հիշասարքերի շարքում 6 տրանզիստորային հիշողության տարրական բջջով ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերը (ՍԿԸՀ) շարունակում են առանցքային դեր խաղալ գրեթե բոլոր ԻՍ համակարգերում՝ դրանց գերազանց արագության և տեխնոլոգիական գործընթացի հետ ամբողջովին համատեղելիության պատճառով: Սակայն տեխնոլոգիայի շարունակական մաշտաբավորմամբ պայմանավորված՝ ՍԿԸՀ-ների նախագծման ընթացքում առաջ են գալիս ծանր մարտահրավերներ: Անհրաժեշտ է լինում պահպանել բջջի բավարար կայունության պաշարը՝ տեխնոլոգիայի մաշտաբավորմանը զուգնթաց: Միննույն ժամանակ, բջջային հավելվածների արագ ընդլայնումը, ներառյալ սենսորային նոր հավելվածները և բժշկական սարքավորումները, պահանջում են ավելի մեծ լարման մաշտաբավորում՝ բավարարելու համար հզորության սահմանափակումները: Վերջին տարիներին լայնորեն ուսումնասիրվել են նորարարական շատ շղթաների տոպոլոգիաներ և մեթոդներ՝ լուծելու համար այդ մարտահրավերները:

Հետազոտության առարկան: Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերում արագագործության բարձրացման գրանցման և ընթերցման գործողությունների միաժամանակ կրճատմանն ուղղված նախագծման մեթոդները,

սխեմատեխնիկական լուծումները, ֆիզիկական նախագծման եղանակները, գործընթացները և դրանց ստուգման միջոցները:

Աշխատանքի նպատակը: Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի հիմնական պարամետրերի թույլատրելի կորուստների հաշվին՝ դրանց արագագործության՝ գրանցման և ընթերցման գործողությունների հապաղումների նվազարկման մեթոդների մշակումը:

Հետազոտության մեթոդները: Ատենախոսության կատարման ընթացքում կիրառվել են թվային և էլեկտրական շղթաների տեսությունները, օբյեկտակողմնորոշված եղանակով ծրագրային ապահովման կազմակերպման մեթոդները, տրամաբանական և սխեմատեխնիկական մակարդակների լեզուներով նկարագրման, էլեկտրոնային սխեմաների մոդելավորման, մաթեմատիկական վերլուծության, ինտեգրալ սխեմաների սխեմատեխնիկական և ֆիզիկական նախագծման եղանակները:

Գիտական նորույթը:

- Մշակվել է ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքի բաղադրիչ սխեմաների նախագծման նոր մոտեցում՝ գրանցման և ընթերցման հապաղումների միաժամանակ կրճատման նպատակով, որը, ի տարբերություն ժամանակակից միջոցների, ապահովում է հիշասարքի արագագործության աճ 18-32%-ով:
- Բազմակի սնուցման դողերի, արագագործ նախալիցքավորման սխեմայի օգտագործման մեթոդների համատեղ կիրառման համար մշակվել է նաև ինքնաժամանակաչափ սխեմա: Այս մեթոդների համակցումը, կիսահաղորդչային բյուրեղի վրա ՍԿԸՀ-ի զբաղեցրած մակերեսի թույլատրելի աճի պարագայում, ապահովում է հիշասարքի գրանցման և ընթերցման ժամանակների զգալի նվազեցում:
- Մշակվել են համաձայնեցման հատուկ սխեմաների կառուցվածքներ, որոնք, ավանդական մոտեցման համեմատ, նվազեցում են կիսահաղորդչային բյուրեղի վրա զբաղեցվող մակերեսի օգտագործումը 10%-ով՝ հապաղման բլոկների քանակների կրճատման հաշվին:
- Կառուցվել է նոր ճարտարապետությամբ ՍԿԸՀ-ի սխեմա, որն ապահովում է բարձր արդյունավետություն՝ ըստ արագագործության, և թույլ է տալիս ղեկավարել

բջիջների սնուցումները գործողությունների ընթացքում:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ դրույթները:

1. ՍԿԸՀ-ի գրանցման և ընթերցման հապաղումների միաժամանակ նվազարկման եղանակը.
2. ՍԿԸՀ-ի հիշողության զանգվածի համար տարրական բջիջում սնուցման դողերը ղեկավարվող տրանզիստորների քանակի ընտրության եղանակը.
3. Գրանցման և ընթերցման գործողությունները համաձայնեցնող ինքնաժամանակաչափ սխեմայի կառուցվածքը.
4. Արագագործ ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքի ճարտարապետությունը.
5. Ատատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի մշակման «Memory Timing Compiler» ծրագրային գործիքը:

Աշխատանքի գործնական արժեքը: 16նմ-անոց տեխնոլոգիական գործընթացի համար առաջարկված մեթոդների կիրառմամբ մշակվել է ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարք, որի հիմնական պարամետրերը էապես գերազանցում են ժամանակակից շուկայում առկա հիշասարքերին:

Ատենախոսությունում ներկայացված հիշասարքի արագագործության բարձրացման եղանակները և մշակված սխեմաները առկա նախագծման երթուղիներում արդյունավետ կիրառելու նպատակով՝ մշակվել է «Memory Timing Compiler» ծրագրային գործիքը: Այն ներդրված է «ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ» (Հայաստան) ընկերությունում և կիրառվում է բազմապիսի հիշողության սարքերի նախագծման երթուղիներում:

Տարբեր ՍԿԸՀ-ների նախագծման փորձարկմամբ ներկայացվել է ծրագրային միջոցի արդյունավետությունը՝ առկա միջոցների համեմատ: Փորձնականորեն նախագծված 43 հիշասարքերի դեպքում, դրանց կիսահաղորդչային բյուրեղի վրա զբաղեցրած մակերեսի ընդամենը մոտ 5-14%-ով և սխեմաների էներգասպառուման մոտ 4-23%-ով կորստի պարագայում, գրանցման և ընթերցման հապաղումները համապատասխանաբար կրճատվել են մոտավորապես 20% և 32%-ով: Այդ ծրագրային գործիքին տալով հիշողության թարգմանիչ, որը պարունակում է ՍԿԸՀ-ի բաղադրիչ

սխեմաների ճարտարապետության նկարագրությունը, կարելի է կառուցել նույն ՍԿԸՀ-ի օգտագործողի կողմից մուտքագրված սահմանափակումներից կախված բազում հիշասարքեր: Ստացված հիշասարքերում ավտոմատ կերպով իրագործվում են մշակված մեթոդների սխեմատիկական և ֆիզիկական լուծումները: Ծրագրային միջոցի ելքում արտածվում են ՍԿԸՀ-ների նախագծերի ներկայացման համար լայնորեն տարածված հիմնական տվյալները՝ բնագավառում օգտագործվող ստանդարտ ֆայլային ձևաչափերով: Ծրագիրը մշակվել է Perl, Python, Shell և C++ լեզուների կիրառմամբ:

Գիտական դրույթների հավաստիությունը: հաստատվում է առաջարկված մեթոդների կիրառմամբ ստեղծված ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման «MTC» ծրագրային գործիքով կառուցված ՍԿԸՀ-ների հիմնական պարամետրեիջ՝ համապատասխանության մեծ աստիճանով հայտնի ծրագրային միջոցներով նախագծված նմանատիպ սխեմաների համանուն ցուցանիշների հետ:

Ներդրումը: «Memory Timing Compiler» ծրագրային գործիքը ներդրված է «ՍԻՆՈՓՍԻՍ ԱՐՄԵՆԻԱ»-ում: Այն օգտագործվում է ՍԿԸՀ-ների նախագծման գործընթացում՝ դրանց արագագործության բարձրացման նպատակով: «Memory Timing Compiler» ծրագրի օգտագործմամբ նախագծված ՍԿԸՀ-ները մի շարք իրական ինտեգրալ սխեմաների մաս են կազմում:

Աշխատանքի փորձարկումը: Ատենախոսության հիմնական գիտական և գործնական արդյունքները զեկուցվել են՝

- 37-րդ միջազգային «Electronics and Nanotechnology (ELNANO)» գիտաժողովում (Կիև, Ուկրաինա, 2017թ.);
- 11-րդ միջազգային «Semiconductor Micro- and Nanoelectronics» գիտաժողովում (Երևան, Հայաստան, 2017թ.);
- ՀԱՊՀ «Միկրոէլեկտրոնային սխեմաներ և համակարգեր» միջֆակուլտետային ամբիոնի գիտական սեմինարներում (Երևան, Հայաստան, 2015-2018թթ.);

Հրատարակումներ: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են հեղինակի՝ գրականության ցանկում բերված 5 գիտական աշխատանքներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է 3 գլուխներից, եզրահանգումից, 110 անուն գրականության ցանկից և 7 հավելվածներից: 1-ին հավելվածում բերված են ատենախոսության ներդրման ակտերը, 2-րդում՝ մշակված ծրագրային գործիքի C++ կոդի որոշ հատվածը, 3-րդում՝ մշակված ծրագրային գործիքի Perl, Python և Shell կոդի որոշ հատվածը, 4-րդում՝ մշակված ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերից մեկի նախագծի պարունակությունը, 5-րդում՝ ատենախոսությունում օգտագործված նկարների ցանկը, 6-րդում՝ աղյուսակների ցանկը, 7-րդում՝ ատենախոսությունում օգտագործված հապավումների ցանկը: Հիմնական տեքստը կազմում է 119 էջ, որում ընդգրկված են 68 նկար և 11 աղյուսակ: Աշխատանքի ընդհանուր ծավալը, հավելվածների հետ միասին, կազմում է 149 էջ:

ԳԼՈՒԽ 1. ՍՏԱՏԻԿ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ
ՀԻՇԱՍԱՐՔԵՐԻ ԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԸ


1.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման անհրաժեշտությունը

1.1.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի նախագծման անհրաժեշտությունը

Տասնամյակների ընթացքում, պրոցեսորների զարգացման հետ միասին, մեծացել է արագագործության խզումը պրոցեսորների և հիշասարքերի միջև, ինչի հետևանքով հիշասարքերը ներկառուցվել են պրոցեսորի ճարտարապետության մեջ: Պրոցեսորների համար իդեալական կարող է լինել իրենց կազմում անսահմանափակ ծավալով և առանց ընտրման հապաղման հիշասարքերի առկայությունը: Սակայն մեծ ծավալով և բարձր արագագործությամբ հիշասարքի իրականացումն անհրաժեշտ է, ինչը պայմանավորված է էլեկտրական շղթաների ֆիզիկական սահմանափակումներով: Հետևաբար, ծավալը սովորաբար հակադարձ համեմատական է հիշասարքի աշխատանքային արագությանը: Օրինակ, ՍԿԸՀ-երով իրագործված քեշ տիպի հիշասարքերը, որոնք ինտեգրված են պրոցեսորների մեջ, ունակ են գործելու այնքան արագ, որքան պրոցեսորի միջուկները, սակայն ունենում են մի քանի Կբ հիշողության ծավալ, մինչդեռ ինտեգրալ սխեմաներում (ԻՍ) չինտեգրված դինամիկ կամայական ընտրությամբ հիշասարքերը (ԴԿԸՀ) ունակ են պահպանելու մի քանի Գբ-ի հասնող տեղեկատվություն, չնայած դրանց աշխատանքային հաճախականությունները մոտ են հարյուրավոր ՄՀց-երի: Ներկայումս ՍԿԸՀ-ներն օգտագործվում են ներկառուցված հիշողության համակարգերում [1]՝ գրանցման ֆայլերի [2] և քեշ տիպի հիշողությունների [3-4] համար (նկ. 1.1) [5]:

Դրանց գերակայության հիմնական պատճառներն են.

- ՍԿԸՀ-ն ի վիճակի է ապահովելու ամենաարդյունավետ ընտրման արագությունը:
- ՍԿԸՀ-ն հնարավորություն է տալիս աննկատ ինտեգրում տրամաբանական շղթաների հետ՝ շնորհիվ գործընթացի և աշխատանքային լարման V_{DD} (Վ) համատեղելիության:



Նկ. 1.1. Հիշողության համակարգում ՍԿԸՀ-ի դիրքը

Բացի այդ, ՍԿԸՀ-ն լանորեն կիրառվում է կրկնիչ և ռեգիստրային հիշասարքերի համար ԻՍ-ում, որը պահանջում է, որ հիշողության թարգմանիչը արտաձի լայն թվով ՍԿԸՀ-ներ, որոնք կունենան տարբեր բիթերի, բառերի, դիմելու մատույցների և բանկերի կոնֆիգուրացիաներ: Համեմատած այլ հիշասարքերի հետ՝ ՍԿԸՀ-ն կարող է ապահովել թարգմանիչ՝ բջջային հիշողության զանգվածի ավելի բարձր արդյունավետությամբ: Կենտրոնական մշակիչ հանգույցի (ԿՄՀ) [6, 7] միջուկներն ինտեգրվում են մեկ ԻՍ-ի մեջ և ԻՍ-ի վրա ինտեգրված ՍԿԸՀ-ի պահանջարկը դառնում է ավելի բարձր՝ ապահովելու համար բավարար տվյալների հոսք, հիշողության ծավալների աճող պահանջարկ և թողունակություն: ՍԿԸՀ-ի զբաղեցրած մակերեսը կիսահաղորդչային բյուրեղի վրա, կազմում է ԻՍ-ի առավել, քան 70%-ը [8]: Արդյունքում ՍԿԸՀ-ի զբաղեցրած մակերեսը, արագագործությունը և էներգասպառումը դարձել են

հիմնական գործոններ առաջանցիկ ԻՍ-երի նախագծման համար: Մարտկոցով աշխատող բջջային հեռախոսների և ձեռքի հավելվածների համար, որտեղ պահանջվող մարտկոցի չափսը/քաշը և կյանքի որոշակի տևողությունը կախված են էներգասպառումից, հատկապես կարևոր է ՍԿԸՀ-ի էներգասպառման խնայումը: ՍԿԸՀ-ի տարրական հիշողության բջջի չափսերի մասշտաբավորումը նույնպես կարևոր է դառնում, ոչ միայն բյուրեղի վրա մակերեսի խնայման, այլև աճող բիթերի խտության տեսանկյունից: Մյուս կողմից՝ տրանզիստորի և ՍԿԸՀ-ի տարրական բջջի չափերի կրճատումը, որը պայմանավորված է տեխնոլոգիական գործընթացի մասշտաբավորմամբ, նույնպես ավելի դժվար է դարձնում բջջի բավարար կայունության պաշարի պահպանումը, մինչև ժամանակ պահելով դիմման ժամանակի և բջջի չափերի մասշտաբավորման նույն տեմպերը: Գրանցման և ընթերցման բավարար կայունության պաշար պահպանելու համար բջջի ծախսած հոսանքը դարձել է մարտահրավեր, քանի որ անհրաժեշտ է նվազեցնել սնման լարումը (V_{DD}) [9-12]՝ ոչ միայն բավարարելու համար հոսանքի խնայման պահանջները, այլև պահպանելու համար տրամաբանական աշխատանքային լարման համատեղելիությունը: Սնման լարման մասշտաբավորումը գրանցման և ընթերցման համար արագորեն դարձել է ամենակարևոր մարտահրավերներից մեկը՝ ՍԿԸՀ-ի կայունության պաշարի հետ ուժեղ կախվածության պատճառով:

1.1.2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի կառուցվածքը

Կախված տակտային ազդանշանի օգտագործումից՝ ՍԿԸՀ-ն կարող է ներկայացվել որպես ասինքրոն կամ սինքրոն [13, 14]: Սինքրոն ՍԿԸՀ-ներում բոլոր ներքին ազդանշանները և ժամանակները վերահսկվում են տակտային ազդանշանի ճակատով [15]: Մուտքային տվյալները, հասցեները, ինչպես նաև ղեկավարող ազդանշանները կախված են տակտային ազդանշանից: Մինչդեռ ասինքրոն ՍԿԸՀ-ներն անկախ են տակտային ազդանշանի հաճախությունից: Բոլոր ներքին ազդանշանները փոխանջատվում են՝ կախված հասցեների անցումներից: Ասինքրոն ՍԿԸՀ-ի հիշողության ծավալը տատանվում է 4Կբ-ից մինչև 64Մբ [16]: ՍԿԸՀ-ների

գործողությունները կարող են բաժանվել 3 մասի՝ սպասման ռեժիմ, ընթերցման ռեժիմ և գրանցման ռեժիմ

Սպասման ռեժիմ

Այս գործողության ընթացքում [17] ՍԿԸՀ-ի հիշողության զանգվածի բառի գիծը ակտիվացված չէ: Հետևաբար՝ հասցեների ու տվյալների գծերը պահվում են առանձնացված ՍԿԸՀ-ի հիշողության զանգվածում տեղակայված տարրական հիշողության բջիջներում: Այդպիսով, բջիջները պահպանում են իրենց մեջ գրանցված տվյալները: Հզորության ցրումը այս ռեժիմում ամենացածրն է:

Ընթերցման ռեժիմ


Բջջում նախապես գրված տրամաբանական «1» կամ «0» տվյալն ընթերցելու համար բիթի և ինվերս բիթի գծերը նախալիցքավորվում են, ապա ակտիվացվում է բառի գիծը, և ըստ մուտքային հասցեների՝ բիթի գծերից մեկը սկսում է լիցքաթափվել բջջի միջոցով [18]: Զգայուն ուժեղարարը հայտնաբերում է բիթի և ինվերս բիթի գծերի միջև պոտենցիալների տարբերությունը և ուղղարկում է համապատասխան ազդանշանը դեպի ելքային հանգույց: Որքան բարձր է զգայուն ուժեղարարի զգայունությունը, ադքան փոքր է ընթերցման հասանելիության ժամանակը:

Գրանցման ռեժիմ

Գրանցման գործողությունը սկսվում է տվյալների մուտքագրման կիրառմամբ: Տրամաբանական «1» գրանցման համար բիթի և ինվերս բիթի գծերը համապատասխանաբար լիցքավորվում և լիցքաթափվում են, և ակտիվացնելով բառի գիծը՝ տրված մուտքային տվյալը գրանցվում է ՍԿԸՀ-ի բջջի մեջ [19]:

Այսպիսով, հիշողության բջջի բաղկացուցիչ մասերի ճշգրիտ չափերի որոշումը պետք է կիրառվի անսխալ՝ գրանցման և ընթերցման համար, ինչպես նաև ստատիկ աղմկակայունության պաշարը (ՍԱՊ) պետք է բավականաչափ մեծ արժեք ունենա այնպես, որ սպասման ռեժիմում հիշողության բջջում աղմուկի պատճառով տվյալները չփոխվեն: ՍԿԸՀ-ն բաղկացած է հետևյալ բլոկերից՝ հիշողության բջիջներից կազմված զանգված (ՀԶ), զգայուն ուժեղարար (ԶՈԻ) [20], սյան մուլտիպլեքսոր (ՍՄ), հասցեի վերծանիչ (ՀՎ), սյան վերծանիչ (ՍՎ) [21], հասցեին տրիգեր (ՀՏ), տողի վերծանիչ (ՏՎ) [22], մուտք/ելք սխեմա (Մ/Ե) [23], ընթերցման-գրանցման (ԸԳԿ) կառավարող սխեմա

և նախալիցքավորման սխեմա (ՆՍ) [24], տողի և սյան ուժեղացնող կրկնիչ (ՏՈՒԿ, ՍՈՒԿ) [25] (նկ. 1.2) [26]:



Նկ. 1.2. 1-4F ՄԿԸՀ-ի վրա հիմնված հիշողության բլոկի դիագրամը

ՄԿԸՀ բջիջների զանգվածը

Մինչև նախագծման մեկնարկը՝ հիշողության զանգվածի չափսի և կողմնորոշման դիտարկումը ամենակարևոր հարցերից մեկն է [27]: Հատուկ աշխատանքային հաճախությամբ աշխատող մեծ հիշողության ծավալով հիշասարքերի նախագծման համար անհրաժեշտ է նախ մշակել հիշողության փոքր բլոկները, որոնք բավարարում են հաճախականության պահանջը: Նման փոքր բլոկների բազմակի օգտագործումը կապահովի ավելի մեծ հիշողության ունակությամբ հիշասարքեր: Զանգվածի չափսը, որը կներկայացնի տողերի և սյուների քանակը, կաշխատի որոշակի առավելագույն հաճախությամբ [28]: Արագագործության բարձրացման նպատակով հնարավոր կլինի նվազեցնել զանգվածի չափսը, ինչը կապահովի ավելի փոքր հապաղում: Նախագծման ընթացքում պետք է հաշվի առնել ոչ միայն

արագագործությունը, որը որոշում է տողերի և սյուների քանակը հիշողության զանգվածում, այլև պետք է դիտարկել կողմերի հարաբերակցությունը: Տողերի և սյուների քանակի կատարյալ հարաբերակցությունը կունենա քառակուսային տեսք [29]: Տարրական բջիջներից կառուցված 8-բիթանոց ՍԿԸՀ-ն կունենա 1Կբ հիշողության ծավալով բլոկ, իսկ զանգվածը՝ 128x8 կողմերի հարաբերակցություն: Այդպիսի հարաբերակցության կիրառումը գործնական տեսանկյունից այնքան էլ արդյունավետ չէ, քանի որ բիթի գծի ունակությունն աճում է բիթի գծի երկարության աճին զուգնթաց, այսինքն՝ ունենալով բիթի երկար գիծ, կավելանա բիթի գծի ունակությունը [30]: Հետևաբար՝ ավելի արդյունավետ է 128 տողերից և 8 սյուներից հիշողության բլոկը բաժանել 4 մասի, օգտագործելով 4:1 մուլտիպլեքսոր:


Վերծանիչ

Ամեն անգամ, երբ հիշասարքը թույլ է տալիս պատահական հասցեներով մուտք, պահանջվում է ունենալ հասցեների վերծանիչ: Այդ վերծանիչների նախագծումը զգալի ազդեցություն է ունենում ՍԿԸՀ-ի արագագործության և հզորության ծախսի վրա: Վերծանիչի արագությունը սահմանվում է միայն մեկ անցումով, հետևաբար՝ կարելի է դիտարկել շղթայի հետևյալ իրականացումը:

Դինամիկ տրամաբանությունն առաջարկում է ավելի լավ տարբերակ: Առաջին լուծման դեպքում առաջարկվում է օգտագործել 2:4 վերծանիչ: Նույն կառուցվածքը կարող է օգտագործվել նաև 32x32 հիշողության զանգված կառուցելու համար, օգտագործելով 5:32 վերծանիչ (նկ. 1.3) [31]:

Զգայուն ուժեղարար

Հիշողության սխեմայում կարևոր դեր է խաղում զգայուն ուժեղարարը [32-35]: Այն իրականացնում է գործառույթներ, ինչպիսիք են՝ ուժեղացում, ազդանշանի վերականգնում, հապաղման և ծախսվող հզորության նվազեցում: Դիֆերենցյալ ուժեղարարը, կախված մուտքային ազդանշանների տարբերությունից, թողարկում է մեկ ելքային ազդանշան (նկ. 1.4) [36]: Հիշողության բջիջները տալիս են դիֆերենցյալ ելք, հետևաբար՝ այս շղթայի օգտագործումը ուղղակիորեն կիրառելի է ՍԿԸՀ-ներում: Զգայուն ուժեղարարի մուտքերն են բիթի և ինվերս բիթի գծերը:




Նկ. 1.3. Վերծանիչի կառուցվածքը


Մ1 և Մ2 դիֆերենցյալ մուտքի տրանզիստորներն են, մինչդեռ Մ3 և Մ4 տրանզիստորները գործում են որպես ակտիվ հոսանքի հայելի: Շղթան ղեկավարելու համար պատասխանատու է SE ազդանշանը: Երբ SE-ն ունի ցածր լարման մակարդակ, ապա բիթի գծերը նախալիցքավորված են և հավասարեցված: Ընթերցման գործողության ընթացքում բիթի գծերից մեկը հողանցվում է: Ակտիվացնող SE ազդանշանն անհրաժեշտ է, որ միացված լինի միայն այն դեպքում, երբ բիթի գծերի միջև հաստատվի բավարար լարման տարբերությունը:

Հասցեի տրիգերը

Հասցեի տրիգերն օգտագործվում է՝ պահելու համար հասցեները՝ նախքան հասցեների գծի վրա գրանցման կամ ընթերցման գործողության սկիզբը (նկ. 1.5) [37, 38]: Եթե կա որևէ խանգարում հասցեների գծի վրա ընթերցման գործողությունը սկսվելուց հետո, ապա այն ազդեցություն չի ունենա ընթերցման ցիկի վրա: Հասցեի տրիգերը ներառում է ինվերսված հապաղման բլոկ (ԻՀ), ԵՎ փական և ռեգիստր:




Նկ. 1.4. Դիֆերենցիալ զգայուն ուժեղարարի կառուցվածքը



Նկ. 1.5. Հասցեի տրիգերի կառուցվածքը

Նախալիցքավորման շղթա


Այս շղթան հարկավոր է բիթի գծերը մինչև սնուցման լարման մակարդակ (V_{DD}) լիցքավորման համար [39]: Գործողությունն անհրաժեշտաբար կատարվում է յուրաքանչյուր գրանցման և ընթերցման ցիկլից առաջ: Բիթի գծերի մեծ ունակության պատճառով նախալիցքավորման շղթան անհրաժեշտ է, որ ապահովի մեծ հոսանք բիթի գծերին, որպեսզի լիցքավորման գործընթացն արագ կայանա: Ուստի, այս սխեմայում օգտագործվող տրանզիստորները պետք է ունենան մեծ չափսեր (նկ. 1.6) [40]: Ակտիվացնող ազդանշանին (PR) տալով տրամաբանական ցածր արժեք, բիթի գծերը կլիցքավորվեն, հակառակ դեպքում, PR-ին տալով տրամաբանական ցածր մակարդակ, բիթի գծերը կկտրվեն:



Նկ. 1.6. Նախալիցքավորման շղթայի կառուցվածքը

Տողի ղեկավարիչ / տողի և սյան ուժեղացնող կրկնիչը (ՏՈԽԿ)

Տողի ղեկավարիչը տեղակայվում է տողի վերձանիչի և հիշողության զանգվածի միջև [41]: Բառի գծի մեծ ունակության պատճառով վերձանիչի ելքը չի կարող պատշաճ կերպով ղեկավարել այն, ինչի հետևանքով հապաղումն ավելանում է: Հետևապես՝ խնդրի հաղթահարման համար տողի ղեկավարիչում օգտագործվում են «ԵՎ» փականը և կենտ թվով շրջիչներ: Յուրաքանչյուր շրջիչի արդյունավետ բեռնվածության ունակությունը սահմանվում է 2,71828 [42]: Մեծ ունակությամբ բառի գծերի ղեկավարման համար անհրաժեշտ է ունենալ մեծ տրանզիստորներ և հետևաբար՝ յուրաքանչյուր հաջորդող շրջիչի չափսերը մեծանում են: Ղեկավարիչի մուտքը հանդիսանում է վերձանիչի ելքը, իսկ ելքը՝ բառի գիծը ակտիվացնող ազդանշանը (WL) (նկ. 1.7) [42]:



Նկ. 1.7. Տողի ղեկավարիչի ներկայացումը


Գրանցման ղեկավարիչը

Գրանցման ցիկլում ի սկզբանե կարգային և ինվերս կարգային դողերը (ԿԴ,ԻԿԴ) լիցքավորվում են մինչև սնման լարման արժեքը (V_{DD}) [43,44]: Ըստ

մուտքային տվյալների (US)՝ գծերի վրա գրանցված տվյալների ԿԴ-ն կամ ԻԿԴ-ն ընտրվում են հողանցման համար:

Եթե անհրաժեշտ է բջջում գրանցել տրամաբանական «1»-ը, ապա ԿԴ-ն լիցքավորվում է մինչև V_{DD} , մինչդեռ ԻԿԴ-ն հողանցվում է և հակառակը՝ տրամաբանական «0»-ն գրանցելու համար:

Գրանցման ակտիվացման ազդանշանը (ԳԱԱ) հաստատվելուց հետո բջջում տվյալների գրանցման համար ակտիվացվում է բառի գիծը: Բիթի գծերը մինչև V_{DD} վերալիցքավորելու կամ հողանցելու համար ժամանակ է պահանջվում, հետևաբար՝ ծախսվող ժամանակը նվազագույնի հասցնելու համար անհրաժեշտ է լինում օգտագործել գրանցման ղեկավարիչը (նկ. 1.8) [45]: Այն հողանցում է կարգային դողերը՝ կախված մուտքային տվյալներից: Բաղկացուցիչ տրանզիստորների չափսերը մեծ են ընտրվում, քանի որ դրանք պետք է կարգավորեն մեծ հոսանք:



Նկ. 1.8. Գրանցման ղեկավարիչի կառուցվածքը

Ընթերցման-գրանցման (ԸԳԿ) կառավարող սխեման

Կառավարող բլոկն առաջացնում է հետևյալ ազդանշանները՝ զգայուն ուժեղարարի թույլատրող ազդանշան (SE), բառի գիծը ակտիվացնող (WL_EN), գրանցման թույլատրման (WR_EN), նախալիցքավորման թույլատրման (PR) և սյուն ակտիվացնող (CL_EN)՝ օգտագործելով ավիք գեներացնող սխեման:


Սյան մուլտիպլեքսորը

14ր հիշողության ծավալով 8-բիթանոց ՍԿԸՀ-ի հմար, որի զանգվածի չափսը 32x 32 է, անհրաժեշտ է օգտագործել 4:1 սյան մուլտիպլեքսոր, որը կընտրի 32 բիթերի գծերից 8-ը: Անհրաժեշտ է, որ վերծանիչն ընտրի մուլտիպլեքսորի ընտրման գծերից մեկը: Այս դեպքում ցանկալի է նախագծել 4:1 մուլտիպլեքսոր՝ օգտագործելով փոխանցման փականի տրամաբանությունը [46]: ՆՄՕԿ թողարկող տրանզիստորի տրամաբանությունը շատ լավ է աշխատում գրանցման ցիկլի ընթացքում, քանի որ բիթի գծերից մեկը հողանցվում է, իսկ ՆՄՕԿ-ը փոխանցում է ուժեղ «0»: Ընթերցման ցիկլի ժամանակ զգայուն ուժեղարարը միացված է մուլտիպլեքսորից հետո: Այն պատճառով, որ ՆՄՕԿ-ը փոխանցում է թույլ «1», զգայուն ուժեղարարը չի կարողանում հայտնաբերել բիթի գծերի լարումների տարբերությունն այնքան ժամանակ, քանի դեռ այդ տարբերությունը չի անցնում շեմային լաուման արժեքը [47]: Այսպիսով, հապաղման կրճատման համար նպատակահարմար է օգտագործել փոխանցման փականի տրամաբանությամբ մուլտիպլեքսոր:

1.1.3. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի նախագծումը

Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի բաղկացուցիչ տարրերը զետեղված են զանգվածի մեջ, որը բաղկացած է տողերից և սյուններից: Յուրաքանչյուր տարրական բջիջից կազմված տող ունի ընդհանուր բառի գիծ, մինչդեռ յուրաքանչյուր սյուն՝ կազմված տարրական բջիջներից, ունի ընդհանուր բիթի գիծ (նկ. 1.9) [48]: Հիշողության զանգվածի սյուների քանակը հայտնի է որպես յուրաքանչյուր բառի բիթի լայնություն, և կախված բիթի գծի (Մ) և բիթի լայնության (Ն) հարաբերակցությունից՝ բիթի գծերը բազմապատկվում են բիթի լայնությամբ Մ•Ն, այսինքն՝ ունենալով 64 բիթ տվյալ (Մ) դուրս են բերվում 8-ը 1-ի մուլտիպլեքսորով 512 բիթի գծերի զույգերով (Ն) [49]: Այս ճարտարապետությունն ունակ է պարզեցնելու զգայուն ուժեղարարի ֆիզիկական նախագիծը: Հիշողության զանգվածը, իր հերթին, բաղկացած է տարրական բջիջներից, ունակ են պահպանելու 1 բիթ տեղեկույթ և կազմված են իրար խաչաձև միացված երկու շրջիչներից և 2 բանալիներից: Շրջիչներն իրար խաչաձև միացված են այնպես, որ առաջին շրջիչի ելքը միացված է երկրորդի մուտքին և

հակառակը: Կոմպլեմենտար մետաղ-օքսիդ կիսահաղորդիչ խաչաձև շրջիչներն ունակ են պահպանելու տրամաբանական «0» կամ «1» վիճակը, քանի դեռ ՍԿԸՀ-ն սնուցվում է և որպես արդյունք՝ չունի տվյալների թարմացման կարիք՝ տվյալները պահպանելու համար իր ցիկլի ժամանակը կրճատելով, ինչպես իրականացված է ԴԿԸՀ-ներում, որտեղ պահանջվում է պարբերաբար թարմացում [50]:




Նկ. 1.9. Հիշողության զանգվածի կառուցվածքը

Սակայն, քանի որ ՍԿԸՀ-ի հիշողության բջիջը բաղկացած է ավելի մեծ թվով տրանզիստորներից, կոնտակտներից և միջմիացումներից, քան ԴԿԸՀ-ն, հետևաբար՝ այն ավելի մեծ մակերես է զբաղեցնում ԻՍ-ի վրա, քան ԴԿԸՀ-ն: Տարրական հիշողության բջիջների մակերեսների հարաբերակցությունը կազմում է 1փ5: Տիպական 6 ԿՄՕԿ տրանզիստորներով կառուցված ՍԿԸՀ-ի տարրական բջջի աշխատանքային սկզբունքները նկարագրված են ստորև:



Ընթերցման գործողությունը

Ընթերցման ցիկլը սկսվում է՝ նախապես լիցքավորելով բիթի գծերի զույգը մինչև տրամաբանական «1» մակարդակը՝ V_{DD} , ապա հաստատելով բառի գիծը՝ հնարավորություն է ընձեռվում՝ միացնելու թողանցման փականը (ԹՓ): Երկրորդ քայլը տեղի է ունենում այն ժամանակ, երբ բիթի գծերի զույգի մի կողմը միացված է պահպանման հանգույցի զույգի տրամաբանական ցածր մակարդակին «0» ԹՓ-ի տրանզիստորի միջոցով, և բիթի գծի վրա պահպանված լիցքը տեղափոխվում է դեպի պահեստային հանգույց: Արդյունքում՝ բիթի գծի մակարդակն իջնում է ոչ միայն լիցքի փոխանակման, այլև հաջորդաբար միացված ԹՓ և ներքև քաշող (ՆՔ)

տրանզիստորների միջոցով՝ տրամաբանական «0» մակարդակի՝ V_{SS} լիցքաթափման պատճառով (նկ. 1.10 ա) [51]:



ա)



բ)

Նկ. 1.10. ՍԿԸՀ-ի ընթերցման գործողությունը. ա) բջջի կառուցվածքը բ) տվյալների տեսքը

Ընթերցման գործողության ընթացքում, լիցքաթափման հոսանքը հոսում է բիթի գծից դեպի V_{SS} : Պահեստային հանգույցի տրամաբանական «0» կողմի պոտենցիալը բարձրանում է՝ կախված հաջորդաբար միացված ԹՓ-ի և ՆՔ-ի դեկավարելիության և

դիմադրության հարաբերակցությունից: Եթե այդ լարման մակարդակը գերազանցում է շրջիչի փոխանջատման կետը, ապա պահված տվյալները շրջվում են:

Տվյալների շրջումից խուսափելու համար ԹՓ-ի ղեկավարելիությունը պետք է լինի ավելի թույլ, քան ՆՔ-ինը (նկ. 1.10 բ) [51]: Այս հարաբերակցությամբ ՍԿԸՀ-ի նախագծման առանցքային պարամետրերից մեկն է β -հարաբերակցությունը: Կայուն գրանցման գործողություն ապահովելու համար անհրաժեշտ է մանրակրկիտ լավարկել տրանզիստորների չափերը՝ որոշելու համար պահանջվող β -հարաբերակցությունը: Բիթի գծի մյուս կողմում ԹՓ տրանզիստորը չի միանում այնքան ժամանակ, քանի դեռ բառի գծի և բիթի գծի կամ պահեստային հանգույցի պոտենցիալների տարբերությունը փոքր է, քան ԹՓ շեմային լարումը (1.1) [51].

$$V_{\text{մաքս}} \leq V_{\text{նք2}} \quad (1.1)$$

ԹՓ1-ը գտնվում է հազեցման ռեժիմում, մինչդեռ ՆՔ1-ը՝ գծային ռեժիմում, և հավասարացնելով ընթացիկ հավասարումները՝ ստացվում է .

$$\frac{\beta_{\text{ԹՓ1}}}{2} (V_{\text{սնմ}} - V_{\text{նք1}} - V_{\text{շեմ}})^2 = \frac{\beta_{\text{ՆՔ1}}}{2} (2(V_{\text{սնմ}} - V_{\text{շեմ}})V_{\text{նք1}} - V_{\text{նք1}}^2) \quad (1.2)$$

տեղադրելով (1.1)-ը (1.2)-ի մեջ կստացվի՝

$$\frac{\beta_{\text{ԹՓ1}}}{\beta_{\text{ՆՔ1}}} = \frac{(W/L)_{\text{ԹՓ1}}}{(W/L)_{\text{ՆՔ1}}} \leq 2 * V_{\text{շեմ}} \frac{(V_{\text{սնմ}} - 1.5V_{\text{շեմ}})}{(V_{\text{սնմ}} - 2V_{\text{շեմ}})^2} \quad (1.3)$$


որտեղ $V_{\text{շեմ}}$ -ը՝ տրանզիստորի շեմային լարումն է, $V_{\text{սնմ}}$ -ը՝ տրանզիստորի սնման լարումը, W -ը և L -ը՝ ԹՓ և ՆՔ տրանզիստորների հոսքուղու լայնությունը և երկարությունը:

Այս իմաստով բիթի գծի նախալիցքավորման մակարդակը պետք է լիցքաթափվի այնպես, որ ԹՓ-ն չմիանա: Եթե հիշողության բջջում պարունակվող տվյալները շրջված են, ապա տեղի կունենա հակառակը, բիթի գիծը կլիցքաթափվի նույն ձևով:



Գրանցման գործողությունը

Գրանցման գործողությունը սկսվում է՝ տանելով բիթի գծերի զույգը դեպի դիֆերենցիալ տրամաբանական մակարդակների «1» և «0»-ն այնպես, որ

համապատասխան տվյալները գրանցվեն պահեստավորման հանգույցների վրա: Հիշողության տարրական բջջի մեջ ինվերս տվյալներ գրանցելու համար անհրաժեշտ կլինի բերել բիթի գծերի զույգը, համեմատած նախորդ վիճակի հետ, դեպի ինվերս դիֆերենցյալ տրամաբանական մակարդակները (նկ. 1.11 ա):



ա)



բ)

Նկ. 1.11. ՍԿԸՀ-ի գրանցման գործողությունը ա) բջջի կառուցվածքը, բ) տվյալների տեսքը


Հաստատելով բառի գիծը, բիթի գծին միացված ԹՓ-ն կմիանա, և համապատասխան պահեստային հանգույցի պոտենցիալը կնվազի, որը կախված է

ԹՓ-ի և լիցքավորման փականի (LՓ) տրանզիստորների ղեկավարելիության հարաբերակցությունից (նկ. 1.11 ք) [52]:

Տարրական հիշողության բջջի մեջ հաջողությամբ տվյալներ գրանցելու համար կրիտիկական մակարդակն անհրաժեշտ է նվազեցնել պահեստային տարրում պարունակվող շրջիչի փոխանջատման կետի մակարդակից ցածր:

Գրանցման սխեման

Գրանցման սխեմայի աշխատանքի սկզբունքը սյուներից մեկի լարման մակարդակը նվազեցնելը և տրամաբանական ցածր մակարդակին հասցնելն է, որին հնարավոր է հասնել բիթի գիծը կամ բիթի գծի ինվերսը հողանցելով Մ3 և Մ2 կամ Մ1 տրանզիստորների միջոցով (նկ. 1.12) [53]: Մ3 տրանզիստորը ղեկավարվում է սյուների վերծանիչով, որն ընտրում է համապատասխան սյունը և ուղարկում դեպի հիշողության զանգված՝ «SEL»:




Նկ. 1.12. Գրանցման սխեմային կառուցվածքը

Մ1 տրանզիստորը միանում է միայն այն ժամանակ, երբ գրանցման թույլատրման ազդանշանը (ԳԹԱ) ակտիվացված է՝ $!W = 0$, և գրանցվող տվյալը «0» է, և հակառակը՝ Մ2 տրանզիստորը միանում է միայն այն ժամանակ երբ գրանցման թույլատրման ազդանշանը՝ ԳԹԱ ակտիվացված է՝ $!W = 0$, իսկ գրանցվող տվյալը «1» է:

Պահպանման գործողությունը

Երբ բառը գիծը ակտիվացված չէ, ՍԿԸԸ-ի բջիջը գտնվում է տվյալների պահպանման ռեժիմում: Տարրական բջջում պարունակվող իրար խաչաձև միացված շրջիչները միացնելու համար անհրաժեշտ է ունենալ V_{DDH} -ի բավարար մակարդակ (նկ. 1.13) [54]:




Նկ. 1.13. ՍԿԸԸ-ի պահպանման գործողության ժամանակ բջջի կառուցվածքը

խաչաձև միացված շրջիչները կուժեղացնեն ազդանշանը, առանց որևէ խանգարման, բիթի գծից մինչև ԹՓ:


Որպես արդյունք՝ ՍԿԸԸ-ի տվյալները կարող են պահպանվել ամբողջ պոտենցիալների տարբերությունը ($V_{DDH}-V_{SS}$), իսկ երբ V_{DDH} -ի լարումն անկարգակր նվազում է որոշակի կետից ցածր, որը կոչվում է որպես տվյալների պահպանման լարում ($S\text{ՊԼ } V_{\text{HOLD}}$), շրջիչներն այլևս չեն կարողանում պահպանել վիճակը, և պահեստային հանգույցները կարող են պահել սխալ վիճակ (նկ. 1.14):

Մուտքի հասանելիության ժամանակը

Հիշողության տարրական բջջի մուտքի հասանելիության ժամանակը ($U<ժ$ $T_{\text{հաս}}$) սահմանվում է որպես պահանջվող ժամանակահատված երկու բիթի գծերի միջև, նախապես սահմանված լարումների տարբերությունը ստանալու համար ($\Delta V_{\text{ին}} \approx 0,1V_{\text{DD}}$) (նկ. 1.15.) [55]: $U<ժ$ -ն չպետք է գերազանցի առավելագույն թույլատրելի լիցքաթափման ժամանակը ($T_{\text{սահմ}}$): ԹՓ և ՆՔ տրանզիստորների չափսերն ազդում են լիցքաթափման ժամանակի և որպես արդյունք՝ ՍԿԸԸ-ի արագագործության վրա:



Նկ. 1.14. ՍԿԸՀ-ում տվյալների պահպանման տեսքը



Նկ. 1.15. 6S բջիջում դիմման գործողությունը

1.1.4. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի խափանումները


ՍԿԸՀ-ի բջջում տեղակայված տրանզիստորների պարամետրերի մեծ անհամապատասխանությունները, որոնք պայմանավորված են մասշտաբավորմամբ կամ տատանումներով (շեմային լարում, կանալի երկարություն, կանալի լայնություն կամ սնման լարում) կարող են հանգեցնել բջջի խափանմանը:

ՍԿԸՀ-ի բջջի խափանումները դասակարգվում են ըստ հետևյալ 4 կատեգորիաների.

- 1) Սխալ ընթերցում. շրջում է բջջում պահված տվյալը ընթերցման գործողության ժամանակ, սահմանվում է որպես ընթերցման խափանում:
- 2) Սխալ գրանցում. տվյալը բջջում գրանցելու անկարողություն, սահմանվում է որպես գրանցման խափանում:
- 3) Բջջի մուտքի ժամանակի ավելացում. հանգեցնում է հապաղման պահանջի խախտման, սահմանվում է որպես դիմման խափանում:
- 4) Բջջում պարունակվող տվյալների խափանում սպասման ռեժիմում ցածր սնման լարման կիրառմամբ. հիմանականում կրճատելու համար արտահոսքի հոսանքը սպասման ռեժիմում, հայտնի է որպես պահպանման խափանում:

Ընթերցման խափանումը

Ընթերցման ընթացքում ($V_{\delta} = 0$ և $V_{\omega} = 1$), լարման բաժանարարի գործողության պատճառով ԹՓձ և ՆՔձ տրանզիստորների միջև, լարումը «2» ($V_{\delta}=V_{ընթ}>0$) հանգույցում ավելանում է մինչև $V_{ընթ}$ դրական արժեքը (նկ. 1.16) [56]:



Նկ. 1.16. Ընթերցման խափանում. ընթերցման ժամանակ տվյալի շրջումը

Եթե $V_{ընթ}$ -ի արժեքը ավելի բարձր է, քան շրջիչի փոխանջատման վերև քաշող (V_{δ}) կետը $V_{\delta} - V_{\omega}$ ($V_{\omega}=V_{փկընթ}<1$), ապա բջջում գրանցված տվյալը շրջվում է ընթերցման ժամանակ [56]: Այս գործողությունը ընթերցման խափանման դեպքն է: Եթե ԹՓ՞-ի թողունակությունը ավելի մեծ է, քան ՆՔձ ՆՄՕԿ տրանզիստորի թողունակությունը, լարման բաժանման գործողությունն այդ երկու տրանզիստորների

միջև մեծացնում է Վընթ լարման արժեքը: Երկու տրանզիստորների հարաբերական (ԹՓ_δ և ՆՔ_δ) ուժի պաշարը տրվում է հետևյալ բանաձևով [56]՝

$$BR_{\text{նք-նթի}} = \frac{\beta_{\text{նթ}}}{\beta_{\text{նք}}} = \frac{\mu_{\text{էֆֆ}} \cdot C_{\text{օք}} W_{\text{նթ}}}{L_{\text{նթ}}} * \frac{L_{\text{նք}}}{\mu_{\text{էֆֆ}} \cdot C_{\text{օք}} W_{\text{նք}}}, \quad (1.4)$$

որտեղ μ -ն լիցքակիրների արդյունավետ շարժունակությունն է, $C_{\text{օք}}$ -ը՝ տրանզիստորի ենթափականային օքսիդի շերտի ունակությունը, $W_{\text{նք}}$ և $W_{\text{նթ}}$ -ը՝ համապատասխանաբար ՆՄՕԿ ԹՓ_δ և ՆՔ_δ տրանզիստորների հոսքուղու լայնությունները, $L_{\text{նք}}$ -ը, $L_{\text{նթ}}$ -ը՝ տրանզիստորների հոսքուղու երկարությունները: BR_{նք-նթի}-ն նվազում է Վընթ լարման արժեքը, հետևաբար՝ հեշտացնում ընթերցման խափանումը: Այսպիսով, ՍԿԸՀ բջի նախագծման ընթացքում ԹՓ_δ-ի չափսը սովորաբար փոքրացվում է՝ մեծացնելու համար BR_{նք-նթի}-ը: Սակայն նման նախագծման ռազմավարությունը հաշվի չի առնում տարբեր տրանզիստորների ուժերի կամայական շեղումների ազդեցությունները: Այսպես, օրինակ, շեմային լարման կամայական շեղումները, ԹՓ_δ տրանզիստորի շեմային լարման կրճատումը և ՆՔ_δ տրանզիստորի շեմային լարման ավելացումը հանգեցնում է Վընթ լարման արժեքի մեծացման, ինչի արդյունքում առաջանում է ընթերցման խափանում: Նմանապես, շրջիչի փոխանջատման կետը ($V_{\text{փոխ}} = \text{ՎՔ}_w - \text{ՆՔ}_w$) կախված է ՆՄՕԿ ՎՔ_w և ՆՔ_w տրանզիստորների ուժերից: Նոմինալ պամաններում բջիջը նախագծվում է այնպես, որ ՊՄՕԿ տրանզիստորը լինի թույլ, որպեսզի $V_{\text{փոխ}}$ -ը ունենա ցածր արժեք:


Թեև փոխանջատման կետի արժեքը ոչ պակաս է քան $V_{\text{ընթ}}$ լարման արժեքը, այնուամենայնիվ, պարամետրի փոփոխությունը կարող է հանգեցնել ՎՔ_w տրանզիստորի շեմային լարման մեծացման կամ ՆՔ_w տրանզիստորի շեմային լարման փոքրացման: Սա կարող է նվազեցնել $V_{\text{փոխ}}$ արժեքը $V_{\text{ընթ}}$ -ից ցածր, որը նույնպես կհանգեցնի ընթերցման խափանման: Պետք է նշել, որ ընթերցման խափանումն առաջանում է տարբեր տրանզիստորների ուժերի անհամապատասխանությունից:

Գրանցման խափանումը

Տրամաբանական «0» տվյալը բջջում, որտեղ պահված է «1», գրանցելու ընթացքում V_a հանգույցը լիցքաթափվում է ինվերս կարգային դողի միջոցով (ԻԿԴ) մինչև ցածր արժեքը [57]: Այդ արժեքը որոշվում է ՎՔ_w ՊՄՕԿ և ԹՓ_w ՆՄՕԿ

տրանզիստորների լարումների տարբերությամբ [58]: Եթե V_w -ն հնարավոր չէ իջեցնել շրջիչի փոխանջատման կետից ներքև՝ $V_{\text{տր}} - V_{\text{տր}} (V_{\text{տր}})$, ապա բառի գծի ակտիվացումն առաջացնում է գրանցման խափանում (նկ. 1.17) [59]:

Լիցքաթափման հոսանքը (I_w) «Ա» հանգույցում $\text{Թ}\Phi_w$ և $V_{\text{տր}}$ տրանզիստորներով հոսող հոսանքների տարբերությունն է ($I_w = I_{\text{Թ}\Phi} - I_{V_{\text{տր}}}$): Ուստի, ուժեղ ՊՄՕԿ $V_{\text{տր}}$ և թույլ $\text{Թ}\Phi_w$ տրանզիստորները կարող են զգալիորեն դանդաղացնել լիցքաթափման գործընթացը, ինչով կառաջացնեն գրանցման խափանում: Այսպիսով, բջջի նախագծման ընթացքում $V_{\text{տր}}$ և $\text{Թ}\Phi_w$ տրանզիստորների հարաբերություն պետք է ընտրվի այնպես, որ



Նկ. 1.17. Գրանցման խափանում. բջիջը չի գրանցում մուտքային տվյալը

նոմինալ պայմաններում գրանցման ժամանակը ավելի փոքր լինի, քան բառի գիծը ակտիվացնելու ժամանակը: Ավելին, $\text{Թ}\Phi_w$ տրանզիստորի չափերի մեծացումը և/կամ ՊՄՕԿ $V_{\text{տր}}$ տրանզիստորի չափերի փոքրացումը մեծացնում է ընթերցման խափանումը:


Այսպիսով, տարբեր տրանզիստորների չափերի օպտիմալացումը կարևոր է՝ խուսափելու համար գրանցման և ընթերցման խափանումներից:

Դիմման խափանումը

Դիմման ժամանակը ($T_{\text{դ}}$) սահմանվում է որպես՝ ժամանակ, որը հարկավոր է տրված կարգային դողերի միջև լարումների տարբերությունը հայտնաբերելու համար

($\Delta v_{in} \approx 0,1V_{DD}$) [60]: Երբ բջջին դիմելու ժամանակը ավելի երկար է, քան առավելագույն թույլատրելի սահմանը ($T_{սս}$), որը կարող է առաջանալ $V_{2ս}$ շեմային լարման փոփոխությունից (հոսքուղու լայնության կամ սնման լարման), առաջանում է դիմելու խափանում (նկ. 1.18) [60]:


Դիմման խափանումը պայմանավորված է ԹՓ և ՆՔ տրանզիստորների ուժի կրճատմամբ: Հետևաբար, դիմման խափանումը սահմանափակում է ԹՓ տրանզիստորի չափերի փոքրացումը (որը հարկավոր է $BR_{սնք-սթի}$ մեծացնելու և $V_{ընթ}$ նվազեցնելու համար): ԹՓ և ՆՔ ՆՄՕԿ տրանզիստորների շեմային լարումների մեծացումը կարող է զգալիորեն մեծացնել դիմելու ժամանակը:



Նկ. 1.18. Դիմելու խափանումը

Պահպանման խափանումը

Սպասման ռեժիմում բջջի սնման լարման մակարդակն իջեցվում է՝ կորստի հոսանքները նվազեցնելու համար: Սնման լարման մակարդակի իջեցումն առաջացնում է բջջում պահված տվյալների ոչնչացում, որը կոչվում է պահպանման խափանում (նկ. 1.19) [61]: Լարման մակարդակը «Ա» հանգույցում, որտեղ պահված է «1» տվյալը, իջնում է, ինչը պայմանավորված է սնման լարման նվազեցմամբ: Ավելին, ցածր սնման լարման համար ՆՄՕԿ ՆՔ տրանզիստորի արտահոսքը նվազեցնում է «Ա» հանգույցում լարման արժեքը նույնիսկ սնման լարման արժեքից էլ ցածր:



Նկ. 1.19. Պահպանման խափանում. սպասման ռեժիմում տվյալների կորուստը

Եթե «Ա» հանգույցում լարման մակարդակը նվազի շրջիչի փոխանջատման կետից (ՎԲ_δ-ՆԲ_δ) ներքև, ապա տեղի կունենա տվյալների շրջում և տվյալների կորուստ պահպանման ռեժիմում: Սնման լարումը պահպանման ռեժիմում ընտրվում է տվյալների կայունությունն ապահովելու համար:

Այսպիսով, պահպանման, դիմելու, գրանցման և ընթերցման խափանումների հավանականությունը, որոնք առավել զգայուն են շեմային լարման փոփոխություններին [62] և բավականաչափ զգայուն են տրանզիստորի հոսքուղու լայնության և սնման լարման փոփոխությունների նկատմամբ [63], 16-նս տեխնոլոգիայում կարող է հասնել մինչև 5×10^{-3} -ի:

1.2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման արդի վիճակի վերլուծությունը

Նախորդ շարադրանքից հետևում է, որ ներկայումս անհրաժեշտություն է առաջացել մշակելու արագագործ ՍԿԸԸ-ներ: Ստորև ներկայացված են ներկայումս կիրառվող ՍԿԸԸ-ների արագագործության բարձրացման հայտնի [64-76] եղանակները: Այդ մոտեցումների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք նպատակաուղղված են հիմնականում օգտագործվող ՍԿԸԸ-ների բաղադրիչ շրթանների

արագագործության բարձրացմանը: ՍԿԸՀ-ների արագագործության բարձրացման միջոցները բազմաթիվ են, և դրանք կարելի է բաժանել ըստ ժամանակագրության՝

դասական մեթոդ [64,65],

ավելի զարգացած մեթոդներ [66 – 70],

ընթացիկ/վերջին մեթոդներ [71-77]:

Դասական մեթոդ

Դասական մեթոդը [64] հնարավորություն է տալիս նկարագրել ՄՀԺ-ն որպես ֆունկցիա՝ կախված քեշ տիպի հիշասարքերի տարբեր պարամետրերից (քեշ տիպի հիշասարքի չափսը, բլոկի չափսը, ասոցիատությունը): Սակայն այս մեթոդն ունի մի շարք նշանակալի բացթողումներ: Առաջին՝ հասցեները պահող հիշողության պահեստավորումը և կոմպարատորը մոդելավորված չեն, և գործնականում դրանք հաճախ կազմում են կրիտիկական ուղի: Երկրորդ՝ այս մոդելի յուրաքանչյուր փուլը (բառի գիծ, բիթի գիծ) ենթադրում է, որ փուլի մուտքերը փուլային ալիքներ են, մինչդեռ իրական ալիքները հեռու են փուլային լինելուց, և այս հանգամանքը կարող է մեծապես ազդել փուլի հապաղման վրա: Երրորդ՝ հիշասարքի բոլոր ենթազանգվածները տեղաբաշխված են գծային տեսքով, ինչը կարող է հանգեցնել չափազանց վատատեսական ՄՀԺ-ի: Չորրորդ՝ այս մեթոդում կիրառվող վերծանիչի մոդելը փականային մակարդակի է, որը չի ներառում գծերի պարազիտային պարամետրերը, իսկ տրանզիստորների չափսերն ամրագրված են՝ անկախ բեռնվածությունից, օրինակ՝ բառի գծի ղեկավարիչը միշտ ունի նույն չափսը՝ անկախ բջիջների քանակից, որը նա ղեկավարում է: ԵՎ վերջապես, մեթոդը կանխատեսում է միայն քեշ հիշողության ՄՀԺ-ն: Հետագայում մշակվել է նոր մեթոդ, որը կոչվում «CACTI» [65]: Այն դասական մոդելի կատարելագործված տարբերակն է, որը ներառում է հիշողության զանգվածի մոդելը՝ կոմպարատորների և մուլտիպլեքսորների ղեկավարիչ սխեմաները: Այս մոդելում միայն վեջձանիչի բաղադրիչն էր մոդելավորված տրանզիստորային մակարդակով, իսկ մնացած բաղադրիչները մոդելավորված էին փականային մակարդակով:

Չնայած որ «CACTI» մեթոդն ավելի ընդլայնված է, քան դասական մեթոդը, սակայն այն դեռևս հեռու է կատարյալ լինելուց և հաշվի չի առնում $V_{2նմ}$ և $V_{սնմ}$ լարումների վարիացիաները, որոնք ընդհանուր առմամբ ազդում են ՍԿԸՀ-ի

հապաղումների և հզորության վրա: Հետևաբար՝ այս մեթոդները չեն ֆիքսում հիշողության շղթաների ՄՀԾ-ի և հզորության էլեկտրական հատկությունների կամայական վարիացիաները:

Ավելի զարգացած մեթոդներ

Ճարտարապետության մակարդակի միասնական մեթոդը [66], հնարավորություն է տալիս ճշգրիտ մոդելավորել հզորությունը ՍԿԸՀ և բովանդակային-հասցեական-հիշողության (ԲՀՀ) դեպքում: Թեև այս մոդելը հաշվի է առնում սխեմայի հիմնական պարամետրերը, բայց այն չի կարող պատկերել ամբողջ ՍԿԸՀ-ի V_{2i} և V_{DD} -ի տատանումները:

ՍԿԸՀ բջջի կայունության վիճակագրական վերլուծության մեթոդը [67] առաջարկում է գերազանց մոդել հիշասարքի բջջի «DC» աղմուկի շեմի բնութագրման համար: Այն կարող է գնահատել բջջի խափանման հավանականությունը գրանցման և ընթերցման գործողությունների ժամանակ: Սակայն մեթոդում ներկայացված չէ, թե ինչպես են պարամետրերի տատանումները, որոնք կարևոր են ՄՀԾ-ի համար, որոշում տարբեր չափերի ՍԿԸՀ-երի կայունությունը:


Հարմարվող ներկառուցված ՍԿԸՀ-ի մոդուլների մեթոդն [68], առաջարկում է կամ գրանցման պաշարի ընդլայնում, օգտագործելով լողացող հզորության գծի (LՀԳ) մեթոդը կամ հարմարվողական փոփոխության գործընթացի (ՀՓԳ) գրանցման սխեման՝ ակտիվացնելու համար ցածր լարմամբ գրանցման գործողությունը (նկ. 1.20) [68]:

Մեկ սյան մեջ գտնվող յուրաքանչյուր տարրական բջիջների սնման V_{dd} դողերը ($V_{ddm}[n]$) միացված են միմյանց և բաժանված են մյուս սյան սնման լարման գծերից, որոնք միացված են V_{DD} -ին Պ տիպի մետաղ-օքսիդ կիսահաղոդչով (ՊՄՕԿ):

Իր հերթին՝ ՊՄՕԿ-ը ղեկավարվում է «WCLM[n]» ազդանշանով, որն անջատված է, երբ սյան մեջ գտնվող տարրական բջիջը հասանելի է՝ գրանցելու համար, իսկ $V_{ddm}[n]$ -ը փոխվում է և անցնում է լողացող վիճակի:


Նախքան տվյալների շրջումը, որը տեղի է ունենում գրանցման գործողության ընթացքում, գրանցման հոսանքը հոսում է բեռային ու փոխանցող տրանզիստորներով

(նկ. 1.21 ա), և գրանցման հոսանքը նվազեցնում է V_{ddm} լարումը, և գրանցման պաշարը կարող է բարելավվել:




Նկ. 1.20. Լողացող հզորության գծի սխեմայի կառուցվածքը

Ներքին սնման լարման (V_{DDm}) նվազեցումը արգելափակված է հիշողության բջիջ տվյալների անցումով, քանի որ նոր տվյալներով գրանցված հիշողության բջիջ մեջ նրա պահեստային հանգույցի լարումը դառնում է նույնը, ինչպես բիթի գծի լարումը միացված փոխանցող տրանզիստորով (նկ. 1.21 բ): Ղեկավարելով V_{DDm} -ը՝ նվազում է տվյալների պահպանման կայունությունը, և անկայունությունը բարելավվում է գրանցելու պաշարը:



Նկ. 1.21. Հիշողության բջիջում գրանցման պայմանը՝ ա) մինչև տվյալի շրջումը, բ) տվյալի շրջումից հետո


Սա նշանակում է, որ V_{DDm} -ը ղեկավարող հիշողության բջիջն ունի գրանցելու լավ հատկանիշներ, բայց պահպանման վատ հատկանիշներ: Բառի գծի ակտիվացումը նույնպես նվազեցնում է պահպանման հատկանիշները: Կառուցվածքում, որտեղ V_{DDm} -ը նույն զանգվածում միացված է և ղեկավարվում է գրանցման գործողության ընթացքում (նկ. 1.22 ա), դառնում է հիմնականում անկայուն, բջիջներում գրանցված տվյալները հեշտությամբ կարող են ոչնչանալ: Այն կառուցվածքում, որտեղ բառի գծով ակտիվացված բջիջները գտնվում են նույն պայմաններում, տվյալների ոչնչացումը նույնպես հեշտ է (նկ. 1.22 բ): $L < C$ գրանցման մեթոդում V_{DDm} -ը ղեկավարվում է միայն ընտրված սյուներում (նկ. 1.22 գ), և դա պահպանում է բարձր պահպանման հատկանիշներ այն բջիջներում, որոնք ընտրված չեն տվյալներ գրանցելու համար:




Նկ. 1.22. Ղեկավարվող սնման լարումը և բջջի կայունությունը՝ ա) բոլոր բջիջների սնման լարումների ղեկավարումը, բ) ընտրված տողի սնման լարումների ղեկավարումը, գ) ընտրված սյան սնման լարումների ղեկավարումը

Օրինակ, նկ. 1.23-ում [68] ցուցադրված են գրանցման գործողության մոդելավորման արդյունքները: Երբ $V_{DDm}[n]$ լարման արժեքը նվազեցված է 50մՎ-ով,

նոր տվյալը գրանցվում է հիշողության բջջի պահեստային հանգույցում: Հետևաբար, օգտագործելով $\text{L}\langle\text{F}$ գրանցման մեթոդը, հնարավոր է լինում բարելավել աշխատանքային պատուհանը (նկ. 1.24):



Նկ. 1.23. Գրանցման գործողության ընթացքում լարման նմանարկման արդյունքները



Նկ. 1.24. Շեմային լարման աշխատանքային պատուհանը

Գրանցման սահմանի գիծը շարժվում է դեպի աջ և գրանցման պաշարը մեծանում է, ինչը նշանակում է, որ V_{DD} -ն կարող է նվազել: Դա ակտիվացնում է ցածր էներգասպառմամբ գործողությունը: Օգտագործելով այս եղանակը, սնման լարման նվազագույն մակարդակը բարելավվում է մոտ 100մՎ-ով: Թեև այս մեթոդը զգալիորեն արդյունավետ է կորստային հոսանքների նվազեցման համար, բայց, միևնույն ժամանակ, պահանջվում է ուշադիր վերահսկողություն սյան և տողի ընտրության


Ժամանակ՝ կանխելու համար նույն սյունում կամ տողում բջիջների կայունության վատթարացումը: Հաջորդ մեթոդն է ՍԿԸՀ-ի բջիջների ստատիկ աղմուկի պաշարի (ՍԱՊ) և գրանցման պաշարի ավելացումն է [69] լարման տարբերության նվազեցման շղթայի միջոցով: Լուծելով (1.2) հավասարությունը բջջի ձախ կողմի ներքին հանգույցի համար (V_{δ}) և օգտագործելով $V_{\text{ս2եմ}}=0,35\text{Վ}$ և $V_{\text{ո2եմ}}=0,4\text{Վ}$ տվյալները, շրջիչի փոխանջատման կետը կարտահայտվի հետևյալ բանաձևով [69]՝

$$V_{\text{ֆոխս}} = \frac{V_{\text{ս2եմ}} + \sqrt{\frac{1}{K}}(V_{\text{սն}} + V_{\text{ո2եմ}})}{1 + \sqrt{\frac{1}{K}}} \quad (1.5)$$

որտեղ՝

$$K = \frac{\mu_{\text{ս}} \cdot C_{\text{օք}} W_{\text{ս}}}{L_{\text{ս}}} * \frac{L_{\text{ո}}}{\mu_{\text{ո}} \cdot C_{\text{օք}} W_{\text{ո}}} \quad (1.6)$$

Բանաձևը ցույց է տալիս, որ փոքրացնելով բառի գծի լարման մակարդակը, ՍԱՊ-ը բարելավվում է: Հաշվելով V_{δ} և $V_{\text{ս2եմ}}$ -ը օգտագործելով՝ արագ ՆՄՕԿ տրանզիստորը կստացվի ՍԱՊ-ը: Նկ. 1.25-ում [69] բերված են V_{δ} -ի և ՍԱՊ-ի կախվածությունները բառի գծի և սնման լարման (V_{DD}) տարբեր արժեքների դեպքում:




Նկ. 1. 25. Տարբեր բառերի գծերի լարումների դեպքում ներքին հանգույցի լարման և ատատիկ աղմուկի պաշարի կախվածությունները

Վերլուծական մոդելը կանխատեսում է, որ նվազեցնելով բառի գծի լարման արժեքը, ավելանում է ՍԱՊ-ը՝ նորմալ և ցածր սնման լարումների դեպքերում: Չնայած որ մեթոդը հաջող է ՍԱՊ-ի ավելացման և լարման տարբերության նվազեցման դեպքում, այնուհանդերձ, այն կիրառվում է հիմնականում գրանցման գործողության, բայց ոչ ընթերցման դեպքում: Մեթոդը ցուցադրում է, որ հիշասարքի մուտքի հասանելիության արագությունը մասամբ կրճատվում է՝ պայմանավորված բառի գծի լարման նվազեցմամբ: Լիցքի փոխանակման մեթոդով [70] նվազեցվել է առաջարկում հզորության ծախսը՝ օգտագործելով ցածր-էներգասպառումամբ գրանցման սխեման, որը դինամիկ կերպով լիցքավորում է բիթի գծերը, բայց այն իրականացվում է ՍԱՊ-ի կրճատման հաշվին:

Ընթացիկ մեթոդներ

Ներկայումս կիրառվող մոտեցումներից մեկն է 8S ՍԿԸՀ բջջի մեթոդը, որն առաջարկում է հիշողության զանգվածում օգտագործել միայնակ բիթի գծով 8S տարրական բջիջ: Այն բաղկացած է մեկ բիթի գծից («BL») և 2 առանձին բառերի գծերից (գրանցման բառի գիծ «WWL» և ընթերցման բառի գիծ «RWL»): Բջիջը կառուցված է հետևյալ կերպ. խաչաձև միացված երկու շրջիչներից մեկն ունի 2 ՆՄՕԿ և 1 ՊՄՕԿ (P-2, N-1, N-3), իսկ մյուսը՝ 1 ՆՄՕԿ և 1 ՊՄՕԿ (P-1, N-2) (նկ. 1.26) [71]:



Նկ. 1.26. Միամատույց 8S ՍԿԸՀ-ի կառուցվածքը

N3-ը ղեկավարվում է «CS» ազդանշանով, որն անջատում է խաչաձև միացված շրջիչների հետադարձ կապը [71]:

Գրանցման և ընթերցման գործողությունները ղեկավարվում են առանձին բառերի գծերով, որոնք ուժեղացնում են բջջի գրանցման ունակությունը և ընթերցման կայունությունը: «WWL»-ն ազդանշանն օգտագործվում է միայնակ բիթի գծից դեպի ելքային «Q» հանգույց տվյալների փոխանցման և շրջված տվյալները «QBAR» հանգույցի վրա պահելու համար: Նախքան «Q» հանգույցում տրամաբանական «1» գրանցելը, բիթի գիծը և «WWL» հանգույցը լիցքավորվում են մինչև V_{DD} , մինչդեռ «CS» հանգույցը մնում է «0» մակարդակին, որպեսզի պահի «Q» հանգույցում պահված տվյալը: Տրամաբանական «0» գրանցելու համար բիթի գիծը հողանցվում է, իսկ «CS»-ը լիցքավորվում է մինչև V_{DD} , հեշտությամբ շրջելու համար «Q» հանգույցը «1»-ից «0» (աղ. 1.1) [71]:


Աղյուսակ 1.1.

ՑՏ ՄԿԸՀ բջջի գործողությունները


Ղեկավարող ազդանշաններ	Գրանցել «1»	Գրանցել «0»	Ընթերցել	Պահել
WWL	1	1	0	0
RWL	0	0	1	0
BL	1	0	1	1
CS	0	1	0	1

Նախքան ընթերցման գործողությունը նախաձեռնելը, բիթի գիծը պահվում է V_{DD} -ում, մինչդեռ WWL-ը և RWL-ը համապատասխանաբար՝ «0» և «1»-ում: Q հանգույցը, անմիջականորեն միացված լինելով ՊՄՕԿ (P_3) տրանզիստորին, տրամաբանական «1» ընթերցելու ժամանակ P_3-ը անջատվում է՝ Q հանգույցում «1» լինելու պատճառով: Նախալիցքավորված բիթի գիծը չի լիցքաթափվում, քանի որ P_3-ը փակ է, և արդյունքում՝ «1»-ը ընթերցում է զգայուն ուժեղարարը: Եթե Q հանգույցում գրանցված է «0», ապա ՊՄՕԿ-ը միանում է և ակտիվացնելով RWL-ը, հնարավոր է դառնում բիթի գծի հանգույցում պահված ամբողջ լիցքը լիցքաթափել P_3-ով և N_5-ով, որից հետո զգայուն ուժեղարարն ընթերցում է «0»-ն:

Պահման գործողության համար WWL-ը և RWL-ը անջատվում են, մինչ բառի գիծը և CS-ը լիցքավորվում են մինչև V_{DD} : Պահման կայունությունը չափվում է բջջի պահման վիճակի ընթացքում: Այն ցույց է տալիս տվյալների պահպանման կարողությունը [72]: Ստատիկ աղմուկի շեմ ՍԱՇ-ը սահմանում է ամենամեծ աղմուկի շեմը, որը կարող է կիրառվել 8S ՍԿԸՀ-ի համար՝ պահման (նկ. 1.27 ա) և ընթերցման (նկ. 1.27 բ) ժամանակ (ՊՍԱՇ, ԸՍԱՇ) [73]:



ա)



բ)

Նկ. 1.27. 8S ՍԿԸՀ բջջի՝ ա) պահպանման ստատիկ աղմուկի շեմը, բ) ընթերցման ստատիկ աղմուկի շեմը

Համեմատած դասական մեթոդի հետ (6S ՍԿԸՀ), օգտագործելով 8S ՍԿԸՀ-ն, ստացվում է հետևյալ պատկերը (աղ. 1.2.) [73]: Ընթերցման ՍԱՇ-ը բարելավվում է մեկ

բիթի գծի օգտագործման հետևանքով, պահպանման ՍԱՇ-ը չի փոխվում, մինչդեռ գրանցելու ունակությունը վատթարանում է:

Ընթերցման հասանելիության հապաղման (ԸՀՀ) որոշման նպատակով [74]-ում հաշվարկվել է ընթերցման բառի գծի «0»-ից «1» փոխանջատման և զգայուն ուժեղարարի ելքի «1»-ից «0» փոխանջատման 50%-ի առավելագույն ժամանակահատվածը: Գրանցման հասանելիության հապաղման (ԳՀՀ) որոշման նպատակով [75]-ում հաշվարկվել է գրանցման բառի գծի «0»-ից «1» փոխանջատման և Q հանգույցի «1»-ից «0» փոխանջատման 50%-ի ամենաերկար ժամանակահատվածը (աղ. 1.3) [75]:

Աղյուսակ 1.2.

8S ՍԿԸՀ բջջի գրանցման, պահպանման և ընթերցման ՍԱՇ-երի համեմատությունը

Տարրական բջիջ	ԳՍԱՇ (Վ)	ՊՍԱՇ (Վ)	ԸՍԱՇ (Վ)
6S ՍԿԸՀ	0,231	0,67	0,94
8S ՍԿԸՀ	0,708	0,67	0,71

Աղյուսակ 1.3.


Գրանցման և ընթերցման հասանելիության հապաղման համեմատությունը

Տարրական բջիջ	ԳՀՀ (պվ)	ԸՀՀ(պվ)
6S ՍԿԸՀ	82,62	340,32
8S ՍԿԸՀ	63,27	175,92

Համաձայն բերված տվյալների՝ տարբեր ՍԿԸՀ-ների դեպքում նշված մոտեցման կիրառումը, գրանցելու ունակությանը մոտ 34%-ով կորստի պարագայում, կարող է բարելավել արագագործությունը՝ փոքրացնելով գրանցման և ընթերցման հապաղումները համապատասխանաբար՝ 20%-ով և 48%-ով:


Ավտոմատ ընտրողական ուժեղացման մեթոդի [76] էությունը գրանցման գործողության վրա ծախսվող ժամանակի կրճատումն ու բառի գծերի ամպլիտուդի փոքրացումն է, որն իր հերթին հանգեցնում է դինամիկ և կորստային հզորության նվազեցման: Այն ընտրողաբար ուժեղացնում է բջջի սնման լարումը (V_{DDCELL})՝ փոքրացնելու համար բառի գծի հապաղումը (T_{pq}): Սնման լարման ղեկավարումն

իրականացվում է ավտոմատ ընտրության շղթայով (ԱԸՇ) հիշողության զանգվածի յուրաքանչյուր սյունում: ԱԸՇ-ն բաղկացած է բիթի գծի վերծանիչից, ինչպես նաև V_{DD} -ից V_{DDH} ուժեղացնող բանալուց: Բիթի գծի վերծանիչը հայտնաբերում է դանդաղ բիթի գծի ազդանշանի առաջացումը դանդաղագործ հիշողության բջջից (նկ. 1.28) [76]: Բառի գծի ակտիվացումից հետո նախնական ընտրությունն իրականացվում է՝ օգտագործելով «PRE_SAE» ազդանշանը՝ նախքան զգայուն ուժեղարարի մուտքային թույլատրող ազդանշանի ակտիվացումը:




Նկ. 1.28. Ավտոմատ ընտրման սխեմայի կառուցվածքը

Այնուհետև բիթի գծի վերծանիչը հայտնաբերում է անբավարար բիթի գծի ամպլիտուդը, որն առաջանում է դանդաղագործ հիշողության բջջի պատճառով, և դանդաղագործ բջջի սնման լարումը ուժեղացվում է՝ միացնելով այն V_{DDH} -ին (նկ. 1.29) [76]: Որպես արդյունք՝ դանդաղագործ բջջի հոսանքը և բիթի գծի ամպլիտուդը մեծանում են՝ նախքան հայտնաբերվելը: Հետևաբար՝ ցիկլի ժամանակը նվազում է:



Նկ. 1.29. Ավտոմատ ընտրման սխեմայի գործողության նմանակման արդյունքները

Նկ. 1.29-ում [76] բառի գծի հապաղումը (T_{pq}) սնման լարման 0,5Վ մակարդակում տեղափոխված է դեպի ձախ, այսինքն՝ զգայուն ուժեղարարի ակտիվացումից հետո բիթի գծերի ΔV տարբերությունը ($\cong 100$ մՎ) ավելի շուտ է հաստատվում և հայտնաբերվում զգայուն ուժեղարարի միջոցով (նկ. 1.30) [77]:



Նկ. 1. 30. Ավտոմատ ընտրման սխեմայով և առանց դրա՝ կարգային դողերի ընթերցման հապաղման նմանակման արդյունքները

Այսպիսով, նշված մոտեցուման դեպքում ՍԿԸՀ-ի գրանցման տևողության նվազարկումը մինչև 60% կատարվում է հիշողության զանգվածի զբաղեցրած մակերեսի 5% մեծացման, ինչպես նաև լրացուցիչ ԱԸՇ-ի ներմուծման հաշվին: 32Կբ

հիողության ծավալով ՍԿԸՀ-ի համար ցիկլի տևողությունը ($T_{ցտ}$) կազմում է 120նվ, մինչդեռ ժամանակակից արագագործ ՍԿԸՀ-ներում $T^{ցտ}$ -ն մոտ է 1նվ-ին:

Ինչպես նշվեց, ՍԿԸՀ-ների արագագործության բարձրացման մոտեցումները շատ են: Սակայն դրանց վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջիններս արդյունավետության տեսանկյունից չեն բավարարում գործնական նախագծմանը առաջադրվող ժամանակակից պահանջները, քանի որ նպատակաուղղված են միայն գրանցման կամ միայն ընթերցման հապաղումների կրճատմանը:

1.3. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցներին առաջադրվող պահանջները

ՍԿԸՀ-ի բաղադրիչ շղթաների որակական ցուցանիշները կարող են վճռորոշ ազդեցություն ունենալ դրանց հիման վրա նախագծվող տարաբնույթ թվային ԻՍ-երի ինտեգրալ բնութագրերի (արտադրողականություն, կիսահաղորդչային բյուրեղի վրա զբաղեցրած մակերես, էներգասպառում և այլն) վրա:

Ներկայումս ՍԿԸՀ-երին առաջադրվող պահանջները հիմնականում վերաբերում են դրանց ժամանակային պարամետրերին, էներգասպառման, կիսահաղորդչային բյուրեղի վրա զբաղեցրած մակերեսին և ցրման հոսանքներին: Քանի որ սպառվող հզորության և արագագործության պահանջներն իրար հակադիր են [78], ապա ՍԿԸՀ-ի արագագործության բարձրացման խնդիրը անհրաժեշտ է ձևակերպել այնպես, որ մի պարամետրի լավացումը չհանգեցնի մյուսի վատթարացմանը:

Արագագործ ՍԿԸՀ-ին առաջադրվող պահանջները. հետևյալն են.

1) ՍԿԸՀ-ի արագագործության զգալի մեծացում

Նախորդող շարադրանքում ցույց տրվեց, որ առկա են ՍԿԸՀ-ի բաղադրիչ հանգույցների հապաղման փոքրացման մեթոդներ, որոնք ապահովում են ԱԿԸՀ-ի արագագործության մեծացումը: Սակայն, գրանցման և ընթերցման գործողությունների վրա խիստ պահանջներ են դրվում: Հետևաբար, առաջանում է ՍԿԸՀ-ի երկու գործողությունների համատեղ նվազարկման հնարավորությամբ նախագծման մեթոդների կիրառման անհրաժեշտություն:

2) ՍԿԸՀ-ի մակերեսի աճի հնարավորին չափ խուսափում

Արագագործության բարձրացման մեթոդները ներառում են ՍԿԸՀ-ների բաղկացուցիչ շղթաներում նոր տարրերի տեղադրումը, որը, համապատասխանաբար, հանգեցնում է կիսահաղորդչային բյուրեղի վրա ՍԿԸՀ-ի զբաղեցրած մակերեսի աճին: Այնուամենայնիվ, ՍԿԸՀ-ի զբաղեցրած մակերեսը կարևորագույն պարամետրերից մեկն է: Այսպիսով, ՍԿԸՀ-ի արագագործության բարձրացման մեթոդները պետք է ապահովեն նրա մակերեսի հնարավոր նվազագույն աճը:

3) Ստատիկ և դինամիկ էներգասպառման հնարավոր փոքր մեծացում

Արագագործության բարձրացման մեթոդների կիրառումը առաջացնում է նաև ՍԿԸՀ-ի ստատիկ և դինամիկ էներգասպառման զգալի ավելացում: Հետևապես՝ ՍԿԸՀ-ի արագագործության բարձրացման մեթոդներին ներկայացվող պահանջներից է էներգասպառման հնարավորինս չմեծանալը:

4) ՍԿԸՀ-ի նախագծման ընթացակարգի բարդության պահպանում

Առաջարկվող նոր միջոցների կիրառումը նախագծողի տեսանկյունից սահմանվում է որպես առկա նախագծման գործընթացում դրանց ներդրման դյուրինություն: Նախագծման գործընթացի բարդության պահպանումը նախագծողի համար կարևոր գործոններից մեկն է մշակման ընդհանուր տևողության կրճատման տեսանկյունից: Հետևաբար, ՍԿԸՀ-ի արագագործության բարձրացման մեթոդներին ներկայացվող պահանջն է, նախագծման, հնարավորինս նվազագույն չափով ավելացնել ներկայիս նախագծման ընթացակարգերի գործընթացի բարդությունը:

Եզրակացություններ

1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակումը ներկայումս թվային ինտեգրալ սխեմաների նախագծման կարևորագույն խնդիրներից է, որի արդյունավետ լուծումը կհանգեցնի դրանց հիմնական պարամետրերի էական լավարկմանը, նոր սերնդի հիշասարքերի ստեղծմանը և նախագծման ժամանակի փոքրացմանը:

2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացումը հնարավոր չէ իրականացնել՝ առանց նոր միջոցների ստեղծման, որոնք ունակ կլինեն հեշտությամբ ինտեգրվելու ներկայիս նախագծման գործընթացներում:
3. Արագագործության բարձրացման ներկայիս օգտագործվող մեթոդներն ուղղված են կամ միայն գրանցման, կամ միայն ընթերցման գործողության հապաղման կրճատմանը, սակայն ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերում դրանք ունակ չեն ապահովելու ծախսվող ժամանակի կրճատումը՝ միաժամանակ գրանցման և ընթերցման ընթացքում: Վերջիններս մշակումը ենթադրում է ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի բաղկացուցիչ սխեմաների նոր կառուցվածքների ստեղծում:
4. Ձևակերպվել են ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցներին առաջադրվող պահանջները, որոնց բավարարումը թույլ կտա ստեղծել այդ դասի մրցունակ հիշասարքեր:

ԳԼՈՒԽ 2. ՍՏԱՏԻԿ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԱՍԱՐՔԵՐԻ ԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԸ

2.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման խնդրի դրվածքը


Ինչպես նշվեց նախորդ շարադրանքում, ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակումը էական նշանակություն ունի ԻՍ-երի նախագծման գործընթացում: ՍԿԸՀ-երի արագագործության բարձրացման ներկայիս մեթոդները մասնագիտացված են միայն գրանցման կամ ընթերցման գործողության բարելավման համար, բայց ժամանակակից ՍԿԸՀ-ների համար դրանց կիրառումը նպատակահարմար չէ, քանի որ ՍԿԸՀ-ին ընդհանուր արագագործության խիստ պահանջներ են ներկայացվում: Բացի դրանից, այդ մեթոդների կիրառումը հանգեցնում է ՍԿԸՀ-ի էներգասպառման, մակերեսի և կորստի հոսանքների անցանկալի աճի:

Սույն աշխատանքի նպատակն է արագագործ ՍԿԸՀ-ի նախագծումը, որը թույլ կտա մեծացնել ԱԿԸՀ-ի արագագործությունը՝ պահանջվող չափով՝ ապահովելով այլ բնութագրերի ցանկալի արժեքներից նվազագույն շեղումը:

Տրված խնդիրը լուծվել է՝ օգտագործելով հետևյալ մեթոդները՝ բազմակի լարումներով սնուցում, հիշողության զանգվածի բանկավորում, պահման ռեժիմում կարգային դողերի լիցքավորված վիճակի պահպանում, արագագործ նախալիցքավորման սխեմայի կիրառում, պահպանելով ՍԿԸՀ-ի բաղադրիչ սխեմաների համաձայնեցումը, իրականացված ինքնաժամանակաչափ բլոկների միջոցով:

Ստորև նկարագրված են թվարկած մեթոդները, մշակված սխեմաների, բանկավորված հիշողության զանգվածի և վերջնական ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքի կառուցվածքները, որոնք ապահովում են, տրված խնդիրների լուծման հնարավորությունը: Առաջարկված մոտեցման իրագործման

նպատակով մշակվել է ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքի արագագործության բարձրացման նախագծման ընթացակարգ (նկ. 2.1):



Նկ. 2.1. Արագագործ ՍԿԸՀ-ի մշակման համար առաջարկվող ընթացակարգը

2.2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման մեթոդների մշակումը


2.2.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի տարրական բջիջների ընտրությունը

Նախորդ շարադրանքից հետևում է, որ ՍԿԸՀ-ներում նախագծման ընթացքում օգտագործվում են բազմատեսակ տարրական հիշողության բջիջներ [79]: Այդ հիշողության բջիջների չափսերը տարբեր են և սովորաբար նախատեսված են բարձր խտությամբ կամ բարձր արտադրողականությամբ հավելվածների համար:

Բջջի զբաղեցրած մակերեսի հաշվին բարձր արտադրողականությամբ տարրական բջիջները սովորաբար նախագծվում են մեծ ԹՓ և ՆՔ տրանզիստորներով՝ միաժամանակ բարելավելու համար ընթերցման հասանելիությունը և գրանցման ունակությունը: Մեծ տրանզիստորները, իրենց հերթին, շահավետ են փոքր ներքին փոփոխություններ ստանալու համար, ինչը հանգեցնում է սնման լարման փոքրացման: Եթե նույնիսկ անտեսվում են բարձր խտությամբ և բարձր արտադրողականությամբ բջիջների միջև ներքին փոփոխությունները, ապա բարձր խտությամբ բջիջը կարող է անհուսալի լինել

արտադրության տեսանկյունից, քանի որ տեխնոլոգիական գործընթացը սովորաբար հասցված է իր սահմանին՝ փոքր մակերեսով բջիջներ ստանալու համար:

Մեծ չափի բարձր արտադրողականությամբ (ԲԱ) տարրական բջիջի և փոքր չափի բարձր խտությամբ (ԲԽ) բջիջի համեմատությունը բերված է ստորև (նկ. 2.2):




Նկ. 2. 2. Սնման լարման արժեքից արագագործ հիշողության բջիջի բիթի խափանման կախվածությունը

Այս երկու բջիջները համեմատված են միևնույն կարգային դողերի ունակային բեռով և բառի գծի ազդանշանի լայնությամբ: Կորերից յուրաքանչյուրը համապատասխանում է բիթի խափանման հաճախությանը, հաշվի առնելով դինամիկ ընթերցման կայունությունը, դինամիկ ընթերցման հասանելիությունը և դինամիկ գրանցման ունակությունը: Բարձր արտադրողականությամբ հիշողության բջիջը, որի վրա դրված է զբաղեցրած մակերեսի 30% սահմանափակում, համեմատած բարձր խտությամբ բջիջի հետ, V_{DD} -ի ամբողջ տիրույթում ունի զգալիորեն ավելի ցածր բիթի խափանման հաճախություն: Հետևաբար, ԲԱ բջիջն ունի ավելի ցածր սնման լարման թույլատրելի արժեք, քան ԲԽ բջիջը: Չնայած նրան, որ ԲԱ բջիջն ակնհայտորեն ավելի հուսալի է, քան ԲԽ բջիջը, զբաղեցրած մեծ մակերեսը կարող է լինել անընդունելի այն հավելվածներում որոնք պահանջում են հիշողության մեծ զանգված:

Ինչպես նշվեց 1.1.3-ում, ՍԿԸՀ-ներում, որտեղ որպես տարրական հիշողության բջիջ օգտագործվում է 6Տ կառուցվածքը, անհրաժեշտ է միաժամանակ օպտիմալացնել ընթերցման կայունությունը և գրանցման ունակությունը, որոնք ունեն հակադիր պահանջներ: Այս պահանջները, ինչպես նաև տրանզիստորների միջև անհամապատասխանության մեծացումը դարձնում է բջջի մասշտաբավորումը յուրաքանչյուր տեխնոլոգիայի դեպքում, առավել բարդ, երբ փորձ է արվում նվազագույնի հասցնել սնման լարումը (V_{DD}):

ՍԿԸՀ 8Տ բջիջը

Արագագործության բարձրացման նպատակով առաջարկվում է ՍԿԸՀ-ում օգտագործել երկմատույց 8Տ բջիջը (նկ. 2.3) [80]: Այն ունի նույն կառուցվածքը, ինչպես 6Տ ՍԿԸՀ բջիջը, բացառելով այն, որ ներքին հանգույցներից մեկը բուֆերացվում է դեպի ելք առանձին ընթերցման ուղիով:



Նկ. 2.3. Երկմատույց 8Տ ՍԿԸՀ-ի կառուցվածքը

Առաջարկված բջիջը բավականաչափ հուսալի է բարձր արտադրողականությամբ հավելվածներում օգտագործելու համար [81]: Ընթերցման և գրանցման գործողությունները կատարվում են իրարից անկախ, տարբեր հանգույցների միջոցով: Ընթերցման գործողությունը կատարվում է 6Տ միջոցով՝ օգտագործելով երկու կարգային դողերը (ԿԴ, ԻԿԴ), և ղեկավարվում է գրանցման

բառի գծով (ԳԲԳ): Գրանցման գործողությունը կատարվում՝ նախալիցքավորելով ընթերցման կարգային դոդը (ԳԿԴ), և ղեկավարվում է ընթերցման բառի գծով (ԸԲԳ): Գրանցման ունակության բարձրացման համար 8S բջջի 6S մասը կարող է օպտիմալացվել, մեծացնելով ԹՓ տրանզիստորի հոսքուղու լայնությունը և փոքրացնելով ՆՔ տրանզիստորի հոսքուղու լայնությունը [82]:

Գրանցման ունակությունը (β) կարելի է գնահատել որպես ԹՓ և ՆՔ տրանզիստորների հոսքուղու լայնությունների հարաբերություն [82]՝

$$\beta = \text{ԹՓ/ՆՔ} \quad (2.1)$$



Այս մոտեցումը ոչ միայն մեծացնում է β հարաբերակցությունը, այլև միևնույն ժամանակ մեծացնում է շրջիչների փոխանցատման կետը, հետևաբար արագանում է գրանցման գործընթացը:

Այսպիսով, ստանդարտ 6S բջջի համեմատ՝ 8S բջիջն ապահովում է հուսալի այլընտրանք, փոքրացնելով ընթերցման գործողության վրա ծախսվող ժամանակը, սակայն դա տեղի է ունենում զբաղեցրած մակերեսի աճի հաշվին, որը կազմում է 40-ից 100% [83]: Չնայած որ 8S բջջում, β հարաբերակցության աճի հետևանքով, կրճատվում է գրանցման տևողությունը, միևնույն է, համեմատած 6S բջջի հետ՝ ՍԿԸԸ-ում գրանցման գործընթացն աճում է մոտ 30%-ով:

ՍԿԸԸ միամատույց 6S բջիջը

Ինչպես երևաց նախորդ շարադրանքից, օգտագործելով 8S բջիջը, հնարավոր է արագացնել ՍԿԸԸ-ի ընթերցման գործողությունը 41%-ով՝ զբաղեցրած մակերեսի զգալի աճի և գրանցման գործողության 30% մեծացման հաշվին: Նվազեցնելու համար թե՛ գրանցման, թե՛ ընթերցման գործողությունների վրա ծախսվող ժամանակը՝ առաջարկվում է այս դեպքում միամատույց 6S բջջի օգտագործումը (նկ. 2.4 ա) [84], որը համադրում է գրանցման և ընթերցման գործողությունների կրճատման հնարավորությունները: Այդպիսի միամատույց 6S բջջում, ի տարբերություն սովորական 6S-ի (նկ. 2.4 բ), բջիջներից բաղկացած յուրաքանչյուր սյան համար ավելացվում են բազմակի լարման համար նախատեսված երկու տրանզիստորներ (P3 և P4 նկ 2.4 բ), որոնցից մեկը միացնում է բջջի սխեմայի հիմնական սնուցումը, իսկ մյուսը՝ բջջի սխեմայի երկրորդական սնուցումը: Այս բջջի օգտագործումը փոքրացնում

Է ընթերցման գործողության վրա ծախսվող ժամանակը՝ համեմատած սովորական 6S բջջի հետ, մակերեսի հնարավորին չափ փոքր մեծացմամբ: Նախագծված միահանգույց 6S բջջի դեպքում տրանզիստորների քանակը, բնական է, ավելի մեծ է (օրինակում՝ 6 տրանզիստոր սովորական 6S բջիջում, նկ.2.4 բ)-ում 6 տրանզիստոր բջիջում և 2-ը՝ տարրական բջիջներից կառուցված սյուներում), քան սովորական բջիջներից կազմված սյան կազմում:



Նկ. 2. 4. Մշակված ՍԿԸՀ սխեմաները՝ ա) սովորական 6S, և բ) միամատույց 6S

Ներկայացված բջջի զբաղեցրած մակերեսը 11%-ով մեծ է սովորական 6S բջջից և 22%-ով փոքր 8S բջջից: Նախագծված փորձնական սխեմայում (տե՛ս 2.4-ը) ընթերցման գործողության ժամանակի խնայողությունը կազմել է 30%՝ 6S տարրերի օգտագործման դեպքի համեմատ:

Այսպիսով, գրանցման և ընթերցման գործողությունների վրա ծախսվող ժամանակների կրճատման համար առաջարկվել է սխեմա, որն ապահովում է անհրաժեշտ արագագործության աճ՝ կիսահաղորդչային բյուրեղի վրա մակերեսի նվազագույն կորստի պարագայում: Արդյունքում՝ հիշասարքի զբաղեցրած մակերեսը ստացվում է ավելի փոքր, քան 8S բջջի օգտագործմամբ մոտեցման դեպքում:

2.2.2. Բազմակի սնուցման դողերով ղեկավարվող ՍԿԸՀ 6S տարրական բջջի կիրառման առանձնահատկությունները և խնդիրները

ՍԿԸՀ-ում բջջի սնուցման դողերը ղեկավարող (ՍԴՂ) տրանզիստորների կիրառումը հանգեցնում է կիսահաղորդչային բյուրեղի վրա ՍԿԸՀ-ի կողմից օգտագործած մակերեսի, դինամիկ և ստատիկ ռեժիմներում էներգասպառման աճին՝ միաժամանակ բարդացնելով տոպոլոգիական նախագծումը: Սնուցման դողերը ղեկավարող սխեմայի օգտագործումը թույլ կտա ապահովել ՍԿԸՀ-ի գրանցման և ընթերցման գործողությունների վրա ծախսվող ժամանակների կրճատումը, արագացնելով բջջում կարգային դողերի լիցքաթափման գործընթացը:

ՍԴՂ-ների կիրառումը պայմանավորված է դրանց հետևյալ բնութագրերով՝

- հիշողության զանգվածում սյան սնման ղեկավարման համար օգտագործված տրանզիստորների քանակով,
- տրանզիստորների երկրաչափական չափերով՝ հոսքուղու երկարությամբ և լայնությամբ,
- լրացուցիչ դինամիկ և ստատիկ հզորություններով,
- սնման շղթայում թուլատրելի առավելագույն լարման անկմամբ:

Ստորև ներկայացված են սնման դողերը ղեկավարող տրանզիստորների մեթոդի կիրառման դեպքում առաջացող խնդիրները և դրանց կարևորությունը:

Սնուցման դողերը ղեկավարող տրանզիստորների չափերի գնահատումը.

Տարրական հիշողության բջջից կազմված սյուներում ՍԴՂ-ների կիրառումը, համապատասխան գործողության դեպքում, մեծացնում է բջիջների հիմնական սնուցման լարման մակարդակը (նկ. 2.5):

Հետևաբար՝ դա հանգեցնում է բջիջների արագագործության բարձրացմանը, քանի որ գրանցման և ընթերցման գործողությունները կախված են օգտագործվող սնուցման լարումից [85]:

$$t_{\text{հապ}} = \frac{C_{\text{բեռ}} V_{\text{սն}}}{(V_{\text{սն}} - V_{\text{շեմ}})^\alpha}, \quad (2.2)$$

որտեղ $V_{\text{սն}}$ -ը սնման լարումն է, $t_{\text{հապ}}$ -ը՝ տարածման հապաղումը, $C_{\text{բեռ}}$ -ը՝ հանգույցի ունակային բեռը, $V_{\text{շեմ}}$ -ը՝ շեմային լարումը, α -ն՝ կարճ հոսքուղու երկույթների նկարագրման գործակիցը: Կիրառելով տրամաբանական ցածր մակարդակի լարումը ղեկավարող տրանզիստորի փականին՝ տեղի կունենա ΔV լարման անկում, հետևաբար՝ վերոնշյալ (2.2) արտահայտությունը կունենա հետևյալ տեսքը՝

$$t_{\text{տար1}} = \frac{C_{\text{բեռ}} (V_{\text{սն}} - \Delta V)}{(V_{\text{սն}} - \Delta V - V_{\text{շեմ}})^\alpha}: \quad (2.3)$$

Այսպիսով, արագագործության փոփոխությունը ($t_{\text{տար}}$) կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

$$\Delta t = t_{\text{տար}} - t'_{\text{տար}} = \frac{C_{\text{բեռ}} V_{\text{սն}}}{(V_{\text{սն}} - V_{\text{շեմ}})^\alpha} - \frac{C_{\text{բեռ}} (V_{\text{սն}} - \Delta V)}{(V_{\text{սն}} - \Delta V - V_{\text{շեմ}})^\alpha}: \quad (2.4)$$

Ղեկավարող տրանզիստորի կորստային հոսանքը կարելի է գնահատել հետևյալ բանաձևով՝


$$I_{\text{կս}} = \mu \cdot C_{\text{օք}} \left(\frac{W}{L} \right)_{\text{ՍԴՂ}} \cdot e^{1.8} \cdot V_{\text{T}}^2 e^{\frac{V_{\text{դա}} - V_{\text{շեմ}}}{nV_{\text{ջ}}}} \left(1 - e^{-\frac{V_{\text{աա}}}{V_{\text{ջ}}}} \right), \quad (2.5)$$

որտեղ $\left(\frac{W}{L} \right)_{\text{ՍԴՂ}}$ -ը սնման դողերը ղեկավարող տրանզիստորի չափը բնութագրող գործակիցն է, իսկ V_{T} - ն՝ ջեմային պոտենցիալը:

Հետևաբար՝ ՍԴՂ տրանզիստորների չափերի որոշումը հանգում է սխեմայի ժամանակային պարամետրերի ներկայացվող պահանջների բավարարմանը:

ՄԴՂ տրանզիստորների օպտիմալ քանակների որոշումը.

ՄԴՂ-ների օպտիմալ քանակը պայմանավորված է հիշողության զանգվածի սյուներում տարրական բջիջների անխափան աշխատանքի համար անհրաժեշտ հոսանքի չափով և կայուն գործողությունների ապահովմամբ (նկ. 2.5) [86]:




Նկ. 2.5. ՄԴՂ-ներով իրականացված հիշողության զանգվածը

Երբ ՍԿԸՀ-ում կատարվում է գրանցման կամ ընթերցման գործողություն, և ըստ մուտքային հասցեների՝ ընտրվում է համապատասխան բջիջը, ապա ՄԴՂ-ով հոսում է $I_{\text{ընթ}}$ կամ $I_{\text{գր}}$ հոսանքը, քանի որ այդ ընթացքում բջջի սնուցումը փոխարինվում է երկրորդական սնուցմամբ: Այսպիսով, ՄԴՂ-ով հոսող հոսանքը կունենա հետևյալ կախվածությունը հապաղումից և ՄԴՂ-ի չափից [87]:

$$I_{\text{գր/ընթ}} \approx \mu \cdot C_{\text{օբ}} \left(\frac{W}{L} \right)_{\text{գր/ընթ}} (V_{\text{սն}} - V_{\text{տն}}) \Delta V: \quad (2.6)$$

Գրանցման գործողության ընթացքում ՍԿԸՀ-ի բջիջը առավել հակված է խափանմանը: Ընտրված բառի գծի ակտիվացումից անմիջապես հետո ներքին պահեստային հանգույցում (!Q), որտեղ պահվում է տրամաբանական «0» արժեքը (նկ. 2.6), լարման մակարդակը մի փոքր բարձրանում է՝ ԹՓ1 և ՆՔ1 տրանզիստորների միջև առաջացող լարման բաժանարարի երևույթի պատճառով:

Եթե պահեստային հանգույցում ընթերցման ընթացքում լարման մակարդակը բարձրանա հարակից ՆՔ1 տրանզիստորի շեմային լարումից, ապա բջջում պահված տվյալը հնարավոր է, որ շրջվի:



Նկ. 2.6. ՍԴՂ տրանզիստորով իրականացված ՍԿԸՀ 6Տ բջջի կառուցվածքը


Հետևաբար, կայուն ընթերցման գործողությունը պահանջում է, որ ՆՔ1 տրանզիստորով հոսող հեսանքի արժեքը ավելի մեծ լինի քան ԹՓ1-ով հոսող հոսանքը, ինչը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

$$\left(\frac{W}{L}\right)_{\text{ՆՔ}} (V_{\text{ԲՁԻՁ}} - V_{\text{ՆՔ2ԵՄ}})^{\alpha} \gg \left(\frac{W}{L}\right)_{\text{ԹՓ}} (V_{\text{ԲԳ}} - V_{\text{ԹՓ2ԵՄ}})^{\alpha} : \quad (2.7)$$

Այդպիսով, անջատման տրանզիստորի անհրաժեշտ չափերի որոնումը հանգում է լրացուցիչ նվազագույն կորստային հզորության ավելացմամբ սխեմայի ժամանակային պարամետրերի վրա դրված պահանջների բավարարմանը:

2.2.3. Սնուցման դողերը ղեկավարող տրանզիստորների արդյունավետության բարձրացումը

Ինչպես ցույց տրվեց նաորդ շարադրանքում, ՍԿԸՀ-ի կայուն գործողությունների համար անհրաժեշտ է հիշողության զանգվածի սյուններում ապահովել հոսանքի բավարար քանակ: Խափանման պայմանը գտնելու նպատակով կատարվել է սխեմատեխնիկական մոդելավորում 16ՆՄ տեխնոլոգիական գործընթացով արտադրված տարբեր չափերի ՄՕԿ տրանզիստորների համար: Ընթերցման գործողության համար երկրորդական սնուցման լարման արժեքը ընտրվել է $1,16 \bullet V_{սն}$ (նկ. 2.7):




Նկ. 2. 7. Սնման դողերը ղեկավարող տրանզիստորի երկրաչափական չափերից ընթերցման հապաղման կախվածությունը

Մոդելավորման արդյունքներից երևում է, որ սնման դողի ղեկավարման տրանզիստորի հոսքուղու W_h լայնության աճի հետ մեկտեղ կրճատվում է ընթերցման գործողության հապաղումը, քանի որ նվազում է կարճ հոսքուղու երևույթների ազդեցությունը: Այն հասնում է առավելագույն արժեքի 154ՆՄ երկարության դեպքում:

Հոսքուղու լայնության հետագա աճը հանգեցնում է ընթերցման խափանմանը, քանի որ հոսքուղու դիմադրության մեծացման պատճառով հիշողության բջջի ՎՔ տրանզիստորի ակունք-հարթակ լարման մակարդակը փոքրանում է՝ հանգեցնելով բջիջում տվյալների շրջմանը (նկ. 2.8): Այսպիսով, ունենալու համար նվազագույն

ընթերցման գործողության հապաղում՝ 16 նմ տեխնոլոգիական գործընթացի համար անհրաժեշտ է ընտրել ՍԴՂ տրանզիստոր. համեմատաբար կարճ հոսքուղու լայնությամբ ($W_n=154$ նմ) տրանզիստորը կունենա β -ի առավելագույն արժեքը:



Նկ. 2. 8. Սնման դողերը ղեկավարող տրանզիստորի երկրաչափական չափերից ընթերցման խափանման կախվածությունը

2.2.4. Արագագործ նախալիցքավորման սխեմայի նախագծման եղանակների մշակումը


Ինչպես երևում է 1.1.2-ից, ՍԿԸՀ-ում ընթերցման գործողության հիմնական բաղադրիչներից մեկը նախալիցքավորման շղթան է: Ստորև բերված են այս տարրի նախագծման առաջարկվող եղանակները և հնարավոր թերությունների վերլուծությունը [88]:

Առաջարկվող արագագործ նախալիցքավորման սխեման.

Ներկայացված է նախալիցքավորման սխեմայի մշակումն արագագործ հիշասարքերի դեպքում, որը թույլ է տալիս ապահովել կայուն և ճշտագրիտ ընթերցում համապատասխան բջիջում գրանցումից հետո:

Մշակված նախալիցքավորման սխեման հարմար է օգտագործել արագագործ հիշասարքերում, որոնք կարող են գրանցել և ընթերցել տեղեկությունները ՍԿԸՀ-ից 1,2ԳՀց-ից 2ԳՀց հաճախությամբ [89]:

ՍԿԸՀ-ում ընթերցման գործողությունից առաջ անհրաժեշտ է լիցքավորել կարգային դողերը, իսկ գրանցման ընթացքում թողանցել տվյալները բջջից դեպի արտաքին հանգույցներ: Առաջարկվում է այս դեպքում նոր տարրի օգտագործում, որը համադրում է գրանցման գործողությունից առաջ նախալիցքավորումը և տվյալների թողանցումը գրանցման գործողության ընթացքում (նկ. 2.9):




Նկ. 2.9. Առաջարկված նախալիցքավորման սխեմայի կառուցվածքը

Այսպիսի նախալիցքավորման սխեմայում, ի տարբերություն սովորական սխեմայի (նկ. 2.9), ավելացվում է թողանցման հնարավորություն ապահովող բլոկը (նկ. 2.10): Այս բլոկներից մեկն ապահովում է լիցքավորումը («Read Precharge»), իսկ մյուսը՝ թողանցում տվյալները դեպի ելքային հանգույց («Write Pass»): Ակնհայտ է, որ այս բլոկները չեն կարող կատարել իրենց ֆունկցիոնալությունը միաժամանակ, քանզի կխախտվի ՍԿԸՀ-ի անխափան աշխատանքը, և կտրամադրվեն սխալ արդյունքներ:


Ընթերցումից առաջ կարգային դողերը պետք է լիցքավորվեն մինչև լարման տրամաբանական բարձր մակարդակը: Այդ նպատակի համար անհրաժեշտ է ակտիվացնել լիցքավորման բլոկը և միաժամանակ ապասկտիվացնել թողանցման բլոկը: Կարգային դողերի լիցքավորման հանգույցը կազմված է երեք ՄՕԿ տրանզիստորներից: Նախքան գրանցումը կամ ընթերցումը, ակտրվացնող

հանգույցում կիրառելով ցածր արժեք ($PRCH=0$), P0, P14 և P9 տրանզիստորները կբացվեն, և ԻԿԴ (BB) և ԿԴ (BT) կլինեն կարճ միացված, հետևաբար՝ դրանց միջև լարումների տարբերությունը կլինի «0» և հավասար սնման լարմանը:




Նկ. 2.10. Սովորական նախալիցքավորման սխեմայի կառուցվածքը

Կատարվել է մշակված սխեմայի մոդելավորում՝ օգտագործելով համապատասխան ծրագրային գործիքը տարբեր գործընթացների համար (դանդաղ, տիպային, արագ), երբ ՍԿԸՀ-ի բջջից ընթերցվում է «0» (նկ. 2.12):



Նկ. 2.11. Թողանցման հնարավորություն ապահովող սխեմայի կառուցվածքը



Նկ. 2.12. Արագագործ նախալիցքավորման սխեմայի նմանարկման արդյունքները

Նախալիցքավորման փուլում «PRCH» հանգույցում «0» է, հետևաբար՝ երկկարգային դողերը լիցքավորված են մինչև V_{DD} , իսկ գնահատման փուլում «PRCH» հանգույցում «1» է: Այս սխեմայի օգտագործումը հանգեցրել է արագագործության մոտ 5% խնայման, սակայն մեծացրել է զբաղեցրած մակերեսը մոտ 2%-ով:

Արագագործ նախալիցքավորման սխեմայի թերությունների վերլուծությունը.

Նախալիցքավորման սխեմայի հիմնական խափանման պատճառն է բաց դիմադրության (ԲԴ) արատը: Այն սահմանվում է որպես արատավոր դիմադրություն շղթայի երկու հանգույցների միջև, որոնք պետք է կապված լինեն [90]:

Արագագործ նախալիցքավորման սխեմայում ԲԴ-ների հնարավոր վայրերը բազում են, հետևաբար՝ նպատակահարմար է դիտարկել միայն ԻԿԴ-ի հատվածում առաջացող ԲԴ-ները, քանի որ սխեման սիմետրիկ է (նկ. 2.13) [91]:

Պարզության նպատակով յուրաքանչյուր վերլուծության համար կարելի է հաշվի առնել միայն մեկ թերություն, քանի որ բազմակի արատների առաջացումն ունի փոքր

հավանականություն 6S ՍԿՀԸ բջջում, տրանզիստորների փոքր քանակի պատճառով: Մասնավորապես, ասիմետրիկ խափանման համար դիտարկվել են՝ «R2», «R3» և «R5» ԲԴ-ները:

R5 արատը.

Այս խափանումն ասիմետրիկ է և, անկասկած, այն ամենաարդյունավետ խափանման պատճառն է, քանի որ իր գործողությունը ոչ միայն կանխում է ԻԿԴ-ի լարման մակարդակի ճշգրիտ բարձրացումը, այլև «P9» տրանզիստորի հավասարեցնող ազդեցությունը: «R5» թերության առկայության դեպքում «P9» տրանզիստորը նպաստում է ԿԴ-ից ասիմետրիկ լիցքի փոխանցմանը:


R3 արատը.

Այս արատն առաջացնում է որոշակի խնդիրներ նախալիցքավորման և հավասարեցման ընթացքում: Իրականում, եթե «P0» և «P14» տրանզիստորների երկրաչափական չափերը մեծ չեն, ապա «P9» տրանզիստորի գործողությունը կարող է վճռորոշ լինել: Նախնական իրավիճակում, երբ ԻԿԴ հանգույցում (bb) հաստատված է տրամաբանական «0» մակարդակը, իսկ ԿԴ հանգույցում (bt) «1», և իրականացվում է նախալիցքավորում, ԻԿԴ հանգույցի լիցքավորումը «0»-ից V_{DD} «P14» տրանզիստորի միջոցով հնարավոր է, որ չբավարարի պատշաճ գործողության ընթացքին: Անարատ շղթայում «P0» տրանզիստորն օժանդակում է ԻԿԴ հանգույցի լիցքավորմանը, քանի որ ԿԴ-ն արդեն լիցքավորված է մինչև V_{DD} : Ավելին, երբ «P0» և «P14» տրանզիստորները ակտիվացված են, դրանք աջակցում են կարգային դողերի հավասարեցմանը:

Այս փաստը վկայում է այն, որ հիշասարքը ֆունկցիոնալ տեսանկյունից կարող է աշխատել անխափան նույնիսկ «R3» արատի առկայության դեպքում:

R2 արատը.

Այս արատն ունի ասիմետրիկ բնույթ և իրականացնում է խանգարում ԻԿԴ հանգույցում լիցքավորման ընթացքում: Այս թերությունը մասամբ կրճատվում է «P9» տրանզիստորի առկայության շնորհիվ, որը նպաստում է ԻԿԴ հանգույցի լիցքավորմանը, վերցնելով լիցքերը «P0»-ից և ԿԴ-ից: Հանգույցը նախապես գտնվում է տրամաբանական բարձր լարման մակարդակում:



Նկ. 2.13. ԲԴ արատներով ներարկված նախալիցքավորման սխեմայի կառուցվածքը

Գործնականում երկու կարգային դողերը լիցքավորվում են «P0» տրանզիստորի միջոցով, բայց ԿԴ-ը կարող է ավելի շատ լիցքավորված լինել, քան ԻԿԴ-ն, քանի որ հոսանքը հոսում է միայն «P0» տրանզիստորով:

Առաջարկված արագագործ նախալիցքավորման սխեմայի համար կատարվել է սխեմատեխնիկական մոդելավորում 16նմ տեխնոլոգիական գործընթացով արտադրված տարբեր չափերի ՄՕԿ տրանզիստորներով: Ընթերցման ռեժիմի համար սնման լարման արժեքը ընտրվել է 1,5Վ, իսկ աշխատանքային հաճախությունը՝ 1,4Գհց (աղ. 2.1):

Աղյուսակ 2. 1

Համապարասխան արարների նմանական արդյունքները

Արատի տեսակ	Խափանման մոդել	Նվազագույն դիմադրություն
R5	անվերականգնելի ընթերցում/գրանցում	240Ոհմ / 440Ոհմ
R3	չկա խափանում (թույլ ΔԿԴ)	-
R2	չկա խափանում (թույլ ΔԿԴ)	-

Արդյունքներից երևում է, որ նախալիցքավորման սխեման զգայուն է միայն արատի նկատմամբ: «R0» արատը, որն առաջացնում է խափանում կարգային դողերի լիցքավորման ընթացքում, այնքան էլ մեծ չէ, քանի որ նույնիսկ եթե դողերը չեն հասնում vdd-ի մակարդակին, շղթայում կա լավ հավասարեցում: «R2» և «R3» արատների առկայության դեպքում նախալիցքավորման սխեմայի ելքում առաջանում է սխալ ΔV_T ($\Delta V_T = |V_T - V_{T0}|$), որն այնքան մեծ չէ, որ առաջացնի խափանում հիշասարքում: «R5» արատի դեպքում առաջանում են անվերականգնելի ընթերցում և գրանցում: Անվերականգնելի ընթերցման կամ գրանցման խափանումները ներկայացնում են այն իրավիճակը, երբ կարգային դողերն ամբողջությամբ չեն լիցքավորվում ընթերցման կամ գրանցման գործողության ավարտից հետո:

Այսպիսով, ընթերցման գործողության համար առաջարկվել է արագագործ նախալիցքավորման սխեմա, և կատարվել է առաջարկված սխեմայի թերությունների վերլուծություն: Հայտնաբերվել են սխեմայի բոլոր հնարավոր արատները, որոնք հնարավոր է, որ առաջացնեն ՍԿԸՀ-ի աշխատանքի խափանում: Համեմատած նախկինում ՍԿԸՀ-ներում օգտագործվող նախալիցքավորման սխեմայի հետ, առաջարկված սխեման ապահովում է գրանցման ընթացքում տվյալների թողանցում և ընթերցման գործողության վրա ծախսվող ժամանակի կրճատում:


2.2.5. Ընթերցման և գրանցման համաձայնեցման ինքնաժամանակաչափ սխեմայի մշակումը

Ինչպես նշվեց 1.1.4-ում, խուսափելու համար հիշասարքի խափանումներից՝ անհրաժեշտ է կառավարել բառի գծի ազդանշանի մակարդակի տևողությունը ընթերցման և գրանցման գործողությունների համար: Այդ համաձայնեցումը թույլ կտա ապահովել տվյալների ընթերցման կամ գրանցման կայունությունը:

Լուծելու համար այս խնդիրը արագագործ հիշասարքերի համար՝ առաջարկվում է նոր ինքնաժամանակաչափ սխեմայի (ԻԺՍ) օգտագործում, որն օժտված է բառի գծի մակարդակի փոփոխության կառավարման հնարավորությամբ:


Սխեման նախագծված է այնպես, որ հիշասարքում առանց որևէ հավելյալ մատույցի ավելացման, միայն ներքին ազդանշաններով հնարավոր լինի կառավարել

բառի գծի ակտիվացման տևողությունը: Այն բաղկացած է որոշակի ենթասխեմաներից՝ ղեկավարման բլոկ և հապաղման բլոկներ: ԻԺՍ-ն ներկառուցվում է հիշողության զանգվածի վերևի հատվածում՝ տողի տեսքով: Հապաղման բլոկների քանակը կախված է հիշողության զանգվածում սյուների քանակից (նկ. 2.14):



Նկ. 2.14. Հիշասարքում ինքնաժամանակաչափի սխեմայի տեղաբաշխումը
Հապաղման բլոկներ.

Այս բլոկները ներկայացնում են տրանզիստորային ունակություններ, որոնք միանալով ԻԺՍ ղեկավարման բլոկին՝ ապահովում են կեղծ բառի գծի «D_WL» ազդանշանի հապաղում: Նրանց դերը ԻԺՍ բլոկի վրա հավելյալ բեռի ավելացնելն է (նկ. 2.15):




Նկ. 2. 15. Հապաղման բլոկի կառուցվածքը

ԻԺՍ ղեկավարման բլոկը.

Սա տեղադրվում է հասցեների վերձանիչի բլոկի վերին հատվածում:

Սինթրոագրանշանի ակտիվացմամբ ակտիվանում են տողի վերձանիչները և ըստ մուտքային հասցեների՝ արտաձում են համապատասխան բառի գծի դրական ճակատը: Միևնույն ժամանակ, սինթրոագրանշանը տրվում է ԻժՍ բլոկին որպես մուտք, ակտիվացնելով կեղծ բառի գծի «D_WL» ազդանշանը, որն անցնելով հապաղման բլոկների միջով՝ վերադառնում է «RET_D_WL» ազդանշանի տեսքով: Վերադարձվող ազդանշանից գեներացվում է բառի գծի ազդանշանի բացասական ճակատը ղեկավարող «WL_EN» ազդանշանը, որի «1» արժեքի պարագայում անջատում է բառի գիծը (նկ. 2.16):



Նկ. 2. 16. Ինքնաժամանակաչափ ղեկավարման բլոկի կառուցվածքը


Այսպիսով, մշակվել է բառի գծի ազդանշանի տևողության ղեկավարման մեթոդ, որը բյուրեղի վրա զբաղեցրած մակերեսի թույլատրելի կորստի պարագայում ապահովում է հիշողության բջջի գրանցման և ընթերցման գործողությունների անխափան աշխատանքը:

2.5. Առաջարկված մեթոդների համատեղ կիրառմամբ ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքի մշակումը

Ըստ 1.1-ում ցույց տրված արդյունքների ԻՍ-երը կազմող ՍԿԸԸ-ների արագագործությանը ներկայացվում են խիստ պահանջներ:

Առաջարկվել է ՍԿԸԸ-ում ներկառուցել ՍԴՂ տրանզիստորներով հիշողության զանգվածը, արագագործ նախալիցքավորման սխեման, ինքնաժամանակաչափ

սխեման, միևնույն ժամանակ կիրառելով բանկավորման, կրկնակի սնուցման դողերի և կենտրոնում վերծանիչի մեթոդները՝ միաժամանակ գրանցման և ընթերցման գործողությունների արագագործության բարձրացման նպատակով: Ըստ ՍԿԸՀ-ների ստանդարտ կառուցվածքի՝ առաջարկված ՍԿԸՀ-ն բաժանվել է որոշակի քանակի բլոկների՝ հիշողության զանգված (<2), գգայուն ուժեղարար (ԶՈԻ), սյան մուլտիպլեքսոր (ՄՍ), հասցեի վերծանիչ (<4), սյան վերծանիչ (ՍՎ), հասցեին տրիգեր (<S), տողի վերծանիչ (SՎ), մուտք/ելք սխեմա (Մ/Ե), ընթերցման-գրանցման (ԸԳԿ) կառավարող սխեմա և արագագործ նախալիցքավորման սխեմա (ԱՆՍ), տողի և սյան ուժեղացնող կրկնիչ (ՏՈԻԿ, ՍՈԻԿ), ինքնաժամանակաչափ սխեմա (ԻԺՍ) (նկ. 2.17), ՍԴՂ:



Նկ. 2.17. Մշակված արագագործ միամատույց ՍԿԸՀ-ի կառուցվածքը

Կառուցվել է 64x8 ՍԿԸՀ՝ <2-ի երկու բանկերով, կենտրոնում վերծանիչով և 4x1 մուլտիպլեքսորներով: Բոլոր ենթասխեմաները բաժանված են ըստ բլոկների: Առաջարկված մեթոդների համատեղ կիրառման հիման վրա 16նմ-անոց տեխնոլոգիայով մշակվել է 0,61Վ հիմնական և 0,71Վ երկրորդական սնուցման լարման

դողերով միամատույց ՍԿԸՀ սխեմա: Այն բաղկացած է 16 բառի գծերից, 32 կարգային դողերից, յուրաքանչյուր սյուն ունի համապատասխան 4-ը 1-ի մուտիպլեքսոր՝ հիշասարքի ելքում 8 ելքային մատույց ապահովելու համար: Սխեման ունի երկու հիմնական մատույց, որով հաջորդաբար կատարվում են գրանցման կամ ընթերցման գործողությունները:

Աղյուսակ 2.2.

Արագագործ միամատույց ՍԿԸՀ-ի ելուստները

Ելուստ	Բիթայնություն	Տեսակ	Անվանումը
Addr	[6:0]	մուտք	Ընթերցման-գրանցման հասցե
CLK	1	մուտք	Սինքրոնազդանշան
WE	1	մուտք	Գրանցման թույլատրում ցածր մակարդակով
ME	1	մուտք	Հիշասարքի աշխատանքի թույլատրում բարձր մակարդակով
I	[7:0]	մուտք	Տվյալների մուտք
O	[7:0]	ելք	Տվյալների ելք
VDD	1	մուտք/ելք	Հիմնական սնման լարում
VDDH	1	մուտք/ելք	Երկրորդական սնման լարում
VSS	1	մուտք/ելք	Հողանցում
PR	1	մուտք	Կարգային դողերի նախալիցքավորում բարձր մակարդակով

Հիշասարքի աշխատանքային ռեժիմներն են՝ «գրանցում», «ընթերցում», «սպասում» (աղ. 2.3.):

Աղյուսակ 2.3.

ՍԿԸՀ-ի բոլոր աշխատանքային ռեժիմների դեպքում բաղադրիչ սխեմաների սնուցումների արժեքները

Ռեժիմ	Հիշողության բջիջ	Նախալիցքավորման սխեմա	ԻժՍ	Բառի գծի ուժեղարար
Գրանցում	V_{DD}	V_{DD}	V_{DD}	V_{DDH}

Ընթերցում	V_{DDH}	V_{DD}	V_{DD}	V_{DDH}
Սպասում	V_{DD}	V_{DD}	-	-

Գրանցման և ընթերցման հապաղումների կրճատման նպատակով կիրառվել են ՍԴՂ, ԻԺՍ և ԱՆՍ մեթոդները, ըստ որոնց հիշողության զանգվածի սյուներն առանձնացված են ըստ սնման մակարդակների: Ղեկավարման և լիցքավորման սխեմաները ղեկավարվում են ($V_{DD}=0,61V$) սնուցման լարմամբ, իսկ գրանցման կամ ընթերցման գործողությունների ընթացքում սնում են ($V_{DDH}=0,71V$) լարումով: ՍԿԸՀ-ն կառավարվում է հատուկ մուտքային ազդանշաններով (ME, WE և այլն) (աղ. 2.2.):

«Գրանցման» ռեժիմ.

Գրանցման ռեժիմում անհրաժեշտ է, որ «ME» և «WE» ազդանշանները լինեն ակտիվ, համապատասխանաբար՝ ME=1, WE=0: Այդ արժեքների դեպքում մուտքային «I» հանգույցի տվյալները կգրանցվեն հիշողության զանգվածում: Գործողության ընթացքում ՍԿԸՀ-ի բոլոր ենթասխեմաները սնվում են V_{DD} լարումով, բացի բառի գծի ուժեղարարից:

«Ընթերցման» ռեժիմ.

Գրանցման ռեժիմում նույնպես հարկավոր է, որ «ME» ազդանշանը ունենա բարձր արժեք, իսկ «WE»=1: Այդ մուտքային արժեքների դեպքում հիշողության զանգվածում գրանցված տվյալները արտաձվում են դեպի ելքային «O» մատույց:

«Սպասման» ռեժիմ.

Այս ռեժիմին անցումը կատարվում է «ME» ազդանշանին հաղորդելով «0» արժեքը և «PR» մատույցին տալով «1» արժեքը: Այս դեպքում ՍԿԸՀ-ն գտնվում է «կեղծ» վիճակում, և կարգային դողերը մնում են լիցքավորված V_{DD} արժեքով:


Նախագծելու համար արագագործ ՍԿԸՀ՝ անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները՝

- ռեժիմների համաձայնեցման ինքնաժամանակաչափի սխեմայի կիրառումը,
- հիշողության զանգվածի սյուների սնման օպտիմալ լարման որոշումը,
- ՍԴՂ տրանզիստորների չափի ընտրությունը:

Ռեժիմների համաձայնեցման ինքնաժամանակաչափ սխեմայի կիրառումը.

Հիշողության զանգվածը միացված է ղեկավարող սխեմային, հետևաբար՝ զանգվածն ակտիվացնելու համար պետք է ապահովել մեծ հոսանքներ: Այդ խնդրի լուծման նպատակով օգտագործում են տողի կրկնիչներ [92]: Քանի որ առաջարկված նոր մեթոդի համաձայն հիշողության բջիջները ընթերցման և գրանցման գործողությունների ընթացքում սնվում են տարբեր լարումներով, տողի կրկնիչները ձևափոխվել են՝ կատարելու համար լարման մակարդակի փոփոխություն (նկ. 2.18.):

S4-ում MN2/MPO,1,2,3, տրանզիստորներն իրականացնում են լարման մակարդակի փոխակերպման ֆունկցիան, իսկ MN1/MP1 տրանզիստորները և «INV_WL» շրջիչը՝ ուժեղացնում են բառի գծի ազդանշանը:



Նկ. 2.18. Ներկառուցված լարման մակարդակի փոխակերպիչով տողի կրկնիչի կառուցվածքը

Կառուցված ՍԿԸՀ-ի յուրաքանչյուր տողերում, վերծանիչների ելքերում կիրառվել են 8 կրկնիչներ՝ ներկառուցված լարման մակարդակի փոխակերպիչով: Դրանց օգտագործումը խնայել է 16 մեուսացնող բջիջների օգտագործած լրացուցիչ մակերեսը՝

առանձին լարման մակարդակի փոխակերպիչների կիրառման դեպքում. մակերեսի խնայողությունը կազմել է մոտ 10%:

Հիշողության գանգվածի սյուների սնման օպտիմալ լարման որոշումը:

Ինչպես ցույց տրվեց 1.1.2-ում, հիշողության բջջի կարևորագույն պարամետրերից մեկը կայունությունն է [93-96], որը կախված է բջջի սնուցման լարման արժեքից, և անհրաժեշտ է ընտրել դրա օպտիմալ արժեքը: Բջջի կայունությունը բնութագրվում է «թիթեռնաձև» փոխանջատման բնութագրի միջոցով, որը ներկայացնում է հիշողության բջիջում տեղակայված, իրար խաչաձև միացված երկու շրջիչների լարման փոխանցման բնութագրերի վերադրման արդյունքը: Առաջին շրջիչի ելքը տեղակայված է «X» կոորդինատական առանցքի վրա, որը միաժամանակ հանդիսանում է նաև երկրորդ շրջիչի մուտքը և ստանում է «թիթեռնաձև» տեսքը: Բնութագրերի հատման կետում մետակայուն վիճակ է, իսկ եզրերում՝ կայուն:


Հիշողության բջջի կայունությունը գնահատվում է «թիթեռնաձև» փոխանջատման բնութագրում, ազդանշանների միջև բացվածքների մակերեսով [94]: Երբ բնութագրերի միջև մակերեսը փոքր է, ապա ցածր է բջջի աղմկակայունությունը: Այդ դեպքում շեղումների ազդեցության պատճառով բջիջում հնարավոր է, որ տեղի ունենա չնախատեսված փոխանջատում, ինչը կհանգեցնի գրանցման կամ ընթերցման խափանման:

Այսպիսով, աղմուկների ազդեցությամբ հիշողության բջիջը (ՀԲ) կարող է գտնվել անկայուն վիճակում [95]: Ընթերցման և գրանցման գործողությունների ընթացքում անհրաժեշտ է, որ ՀԲ-ի «թիթեռնաձև» բնութագիրն ունենա հստակ տարանջատված երեք հատման կետեր: Դա թույլ կտա պահպանել կայուն վիճակը: Գրանցման գործողության ընթացքում կարևորվում է միայն մեկ հատման կետի անկայունությունը, ինչը միանշանակ կապահովի ՀԲ-ի տվյալների փոխանջատումը [96]:

Պարզելու նպատակով հիշողության բջիջներից կազմված սյան սնման լարման օպտիմալ արժեքը, որը անհրաժեշտ է օգտագործել ՍԴՂ մեթոդի դեպքում, կատարվել են նմանակումներ՝ տարբեր սնման լարումներով: Արդյունքում՝ ստացված «թիթեռնաձև» կորերի հիման վրա ընտրվել են համապատասխանաբար՝ հիմնական

սնման 0,61Վ և երկրորդական սնման 0,71Վ լարման արժեքները, որոնց դեպքում ՀԲ-ներից կազմված սյունը կապահովի բավարար կայունության պաշար (նկ. 2.19):

Սնման լարման ավելի ցածր արժեքը (0,51Վ) հանգեցնում է կայունության կորստի և բջիջների աշխատանքի խափանմանը: Գրանցման գործողության ընթացքում խափանումը էապես մեծանում է (նկ. 2.19): Շեմային լարման փոփոխությունները ցածր սնման լարման արժեքների դեպքում առավել մեծ ազդեցություն են ունենում հոսանքի վրա, քանի որ, երբ փական-ակունք լարման մակարդակը ավելի մեծ է, քան շեմային լարումը, տրանզիստորների հոսանքն ուղիղ համեմատական է փական-ակունք և շեմային լարումների տարբերությանը, և համեմատական է $V_{\text{փա}} \cdot V_{\text{շեմ}} \cdot 0,1մՎ$, երբ փական-ակունք լարման մակարդակը ավելի փոքր է, քան շեմային լարումը:



Նկ. 2.19. Հիշողության բջջի տարբեր սնուցման լարումների դեպքում փոխանջատման «թիթեռնաձև» բնութագրերը

Այնուամենայնիվ, պահպանման ռեժիմում փոխանջատման կորերը, նույնիսկ

ցածր լարման արժեքի դեպքում, մնում են կայուն վիճակում: Դրա պատճառով հնարավոր է լինում պահպանել բջիջներում գրանցված տվյալները՝ կիրառելով սնման լարման շատ ավելի ցածր մակարդակ, միաժամանակ նվազեցնելով կորստային հոսանքները:

ՄԴՂ տրանզիստորների չափի և քանակի ընտրությունը.

Ընթերցման գործողության համար հիշողության զանգվածի սյուններում կիրառվել են սնման դողերի ղեկավարման տրանզիստորներ: Սնման դողերի ղեկավարման տրանզիստորների համար նպատակ է դրվել կիրառել լրացուցիչ նվազագույն մակերես ունեցող տրանզիստորներ, քանի որ մեծ ծավալով հիշողության զանգվածի դեպքում ՍԿԸՀ-ի զբաղեցրած մակերեսը մեծանում է բիթերի գծերի թվին զուգնթաց, ինչը առաջացնում է վերջնական ՍԿԸՀ-ի մակերեսի մեծ աճ: Տրանզիստորների չափերը ընտրվել են այնպես, որ ընթերցման գործողության ժամանակը լինի ավելի կարճ, քան սխեմայի տակտային ազդանշանի պարբերությունը: Մեծ ծավալով հիշասարքերում, լուծման համապիտանելիության համար, անհրաժեշտ է ունենալ ընդլայնման հնարավորություն: ՄԴՂ տրանզիստորների մեծ քանակը մեծացնում է ոչ միայն ընթերցման գործողության հապաղումը, այլև ավելացնում է լրացուցիչ մակերեսի ծախսը [97]: Անման դողերի ղեկավարման տրանզիստորների չափերի ընտրման նպատակով կատարվել է ՍԿԸՀ-ի նմանարկում: Արդյունքում գրանցվել են առանձին ընթերցման գործողության ընթացքում հիշողության սյունների ընթերցման հապաղումների միջին արժեքները (աղ. 2.3):


Աղյուսակ 2. 4.

Նախագծված արագագործ ՍԿԸՀ-ի հապաղումները, ծախսվող հզորությունը և զբաղեցրած մակերեսը

Ռեժիմ	Հապաղում (սվ)	Ընդհանուր հզորության ծախս (մկՎտ)	ՀՁ զբաղեցրած մակերես (մկմ ²)	ՄԴՂ-ների քանակ ՀՁ-ում
Գրանցում	712	0,34	593,19	8
Ընթերցում	532	0,27		

Կատարվել է հզորության ծախսի, զբաղեցրած մակերեսի և հապաղման վերլուծություն՝ որոշելու համար հիշողության զանգվածում ՍԴԸ-ների օպտիմալ քանակը: Այդ նպատակով, օգտագործվել են ՍԴԸ տրանզիստորները յուրաքանչյուր սյան համար (64), ապա նվազեցվել է դրանց քանակը յուրաքանչյուր 4 սյան համար, պահպանելով բջիջների անխափան աշխատանքի պայմանը (նկ. 2.20):

Արդյունքներից երևում է, որ օգտագործելով ամեն 4-րդ սյան համար 1 ՍԴԸ տրանզիստոր, հնարավոր է, էներգասպառման մոտ 7-14% և մակերեսի մոտ 13% աճի պարագայում, ապահովել մոտ 4-31%-ով արագագործության աճ:



Նկ. 2.20. ՍԴԸ տրանզիստորների քանակից ՍԿԸԸ-ի հապաղման, հզորության և մակերեսի կախվածությունը

Այսպիսով, օգտագործելով առաջարկված բոլոր մեթոդները մշակված հիշասարքի՝ ծախսված հզորության և բյուրեղի վրա զբաղեցրած մակերեսի թույլատրելի աճի պարագայում, հնարավոր էականորեն բարձրացնել հիշասարքի արագագործության պարամետրերը:

Եզրակացություններ

1. ՍԿԸԸ-ների գրանցման և ընթերցման գործողությունների հապաղումների միաժամանակ կրճատման նպատակով առաջարկվել է բազմակի սնուցման դողերով ԱՆՍ և ԻԺՍ մեթոդների համատեղ կիրառման եղանակ, որը լուծում է

- գործողությունների համաձայնեցման և տրանզիստորների քանակի և չափի ընտրության խնդիրները:
2. Ստեղծվել է սնման դողերի ղեկավարման տեղաբաշխման սխեմայի նոր կառուցվածք, որը, հիշողության զանգվածը առանձին սյունների բաժանելով նվազեցնում է ՍԿԸՀ-ի լրացուցիչ զբաղեցրած մակերեսը: Մշակված կառուցվածքի դեպքում, անկախ տեխնոլոգիական շեղումներից, հնարավոր է ապահովել գործողությունների հապաղումների զգալի կրճատումը:
 3. Սնման դողերի ղեկավարման, արագագործ նախալիցքավորման և ինքնաժամանակաչափ մեթոդների համատեղ կիրառման դեպքի համար մշակվել է ՍԿԸՀ-ի հիմնական պարամետրերի հիման վրա սնման դողերի ղեկավարման տրանզիստորների չափերի և քանակի ընտրության մեթոդ, որը, մակերեսի և հզորության թույլատրելի կորստի դեպքում, ապահովում է գրանցման գործողության հաաղման մոտ 14%-ով և ընթերցման գործողության հապաղման մոտ 29%-ով կրճատում:
 4. ՍԿԸՀ-ի բոլոր ռեժիմների համար առաջարկվել են համաձայնեցման հատուկ սխեմաների կառուցվածքներ, որոնք, հապաղման բլոկների քանակների կրճատման հաշվին, մոտ 10%-ով նվազեցնում են կիսահաղորդչային բյուրեղի վրա զբաղեցրած մակերեսը:
 5. Նախագծվել է նոր ճարտարապետությամբ ՍԿԸՀ-ի սխեմա, որը, սնման դողերի ղեկավարման, արագագործ նախալիցքավորման և ինքնաժամանակաչափման մեթոդների կիրառման շնորհիվ, ապահովում է գրանցման գործողության հապաղման մոտ 17%-ով և ընթերցման գործողության հապաղումման մոտ 31%-ով կրճատում:
 6. Առաջարկվել է նոր մոտեցում, որը, սնուցման տարբեր լարումների կիրառման հաշվին, ապահովում է սխեմայի ելքերի անհրաժեշտ վիճակները:

ԳԼՈՒԽ 3. ՍՏԱՏԻԿ ԿԱՄԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՀԻՇԱՍԱՐՔԵՐԻ ԱՐԱԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Նախորդ գլուխներում առաջարկված մեթոդների հիման վրա կատարվել է ինտեգրալ սխեմաներում ներկառուցված արագագործ ՍԿԸԸ-ների մշակում՝ հատուկ սեղծված Memory Timing Compiler («MTC») ավտոմատացված նախագծման ծրագրային միջոցով: Այդ միջոցով հնարավոր է մշակված մեթոդների կիրառմամբ հիշասարքերի ֆիզիկական նախագծերի ստեղծումը: «MTC» ծրագիրը գրվել է Perl [98], Python [99] և Shell [100] լեզուներով: Ծրագրային միջոցի հիմնական նպատակը արագագործ ՍԿԸԸ-ների ավտոմատ մշակումն է, ինչն արագացնում է նախագծման գործընթացը և ապահովում արագագործության ցանկալի մեծացում՝ հիմնված մշակված մեթոդների վրա:

Ստորև ներկայացված են «MTC» ծրագրային միջոցի կառուցման հիմնական սկզբունքները, արագագործության բարձրացման ղեկավարման ինտերֆեյսը, ինչպես նաև մշակված մեթոդների ծրագրային իրականացման առանձնահատկությունները:

3.1. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների մշակման համակարգը

3.1.1. Ծրագրային միջոցի կառուցման սկզբունքները

«MTC» ծրագրային միջոցի ստեղծման համար սահմանվել են մի քանի հիմնական պահանջներ, որոնք գործնական խնդիրների լուծման դեպքում դրա կիրառումը արդյունավետ կդարձնեն: Այդ պահանջները ներկայացվում են ստորև:

ՍԿԸԸ-ների նախագծման գործընթացում ներդրվելու հնարավորությունը.

ՍԿԸԸ-ների նախագծման գործընթացը կազմվում է բազմապիսի համապիտանի նախագծային միջոցների օգտագործմամբ, որոնց միջև կապն ապահովվում է ստանդարտ կամ լայնորեն օգտագործվող ֆայլային ձևաչափերի օգտագործմամբ: Այդ պատճառով ծրագրային նոր միջոցի ստեղծման հիմնական պահանջներից է դրա

համատեղելիությունը այլ գործիքների հետ և այդպիսի ելքային ձևաչափերի օգտագործումը: Ներկայումս օգտագործվող ծրագրային միջոցները հիմնված են Open Access [101-103] տվյալների հենքերի վրա: Դա ԻՍ-երի ներկայացման թվային միջավայր է, որն ունի հնարավորություն՝ կառավարելու բաց ծրագրային կոդով էլեկտրոնային նախագծման ավտոմատացման (ԷՆԱ) տվյալների բազաների համակարգը [102]: Նախագծված ծրագրային միջոցին ներկայացվել է պահանջ՝ ՍԿԸՀ-ների նախագծման և ստուգման այլ միջոցների հետ համատեղելիության համար նախագծի կառուցումը կատարել Open Access (OA) հենքի միջոցով [103]:

Բացի նախագծի կառուցվածքից, անհրաժեշտ է նաև, որ ծրագրի արդյունքում արտաձևվող այլ օժանդակ ֆայլերի համար օգտագործվեն ստանդարտ և լայնորեն կիրառվող ֆայլերի ձևաչափեր:

Համապիտանելիության հնարավորությունը.

Արագագործ ՍԿԸՀ-ների նախագծումը՝ առաջարկված մեթոդներով, կախված է ինչպես տեխնոլոգիական գործընթացից, այնպես էլ ԱԿԸՀ-ում օգտագործվող բաղադրիչ սխեմաների տեսակներից: Այսինքն, պահանջվում է նաև, որ ստեղծված ծրագրային միջոցն ունենա ընդլայնման հնարավորությունը, որը, ծրագրում առանց հավելյալ փոփոխությունների, ապահովի նոր տեխնոլոգիական գործընթացների և տեսակի բաղադրիչ սխեմաների կիրառման հնարավորությունը: Միևնույն ժամանակ, ցանկալի է, որ նոր տեխնոլոգիական գործընթացների և նոր տեսակի բաղադրիչ սխեմաների օգտագործմամբ պայմանավորված փոփոխություններն, առաջացնեն նվազագույն ձևափոխություններ առաջարկված ծրագրային գործիքում:

Օգտագործողի համար պարզ ինտերֆեյսը.

Անհրաժեշտ է, որ արագագործ ՍԿԸՀ-ների գեներացման ծրագիրը աշխատանքի ընթացքում կառուցի ՍԿԸՀ-ի սխեման, ֆիզիկական կառուցվածքը, սխեմատեխնիկական նկարագիրը և գեներացնի այլ օժանդակ ֆայլեր: Թվարկված բոլոր գործընթացների միաժամանակ գեներացիան, այլ ծրագրերի օգտագործման պարագայում, խլում է զգալի համակարգչային ժամանակ: Հետևաբար, առաջարկվող ծրագիրը պետք է ունենա ներքին ծրագրավորման միջավայրի հնարավորություն: Այդ միջավայրում հնարավոր կլինի պլանավորել դրա աշխատանքի անհրաժեշտ փուլերը և

թողարկել ծրագիր՝ աշխատող առանց օգտագործողի հետ երկխոսության: Մյուս կողմից՝ օգտագործման տեսանկյունից հարմար է կիրառել գրաֆիկական ինտերֆեյս՝ ապահովող ծրագրի բոլոր հնարավորությունների ղեկավարման հարմարությունը:

3.1.2. Համապիտանի հիշողության թարգմանչի նկարագրությունը

«MTC» ծրագրային միջոցը կատարում է արագագործ ՍԿԸՀ-ների ավտոմատացված մշակումն ստեղծվել է այնպես, որ բավարարի վերը նշված բոլոր պահանջները: Ստորև նկարագրված են «MTC» ծրագրային գործիքի (ԾԳ) կիրառումը և հնարավորությունները:

Ստեղծված «MTC» ԾԳ-ը կառուցում է ՍԿԸՀ-ի սխեմատիկական նկարագիրը և ֆիզիկական տեսքը, միաժամանակ պարունակելով 2-րդ գլխում ստացված մեթոդները և սխեմաները (նկ. 3.1): Բացի այդ, այն ներառում է նաև սխեմայի կառուցվածքի արտաձևան, ֆիզիկական կառուցվածքի ստեղծման, բաղադրիչ սխեմաների՝ տարրական բջիջների, համաձայնեցման բլոկների, նախալիցքավորման և ինքնաժամանակաչափ բլոկների, տեղադրման, սնման ցանցի կառուցման և այլ ենթահամակարգեր:


Ըստ համապիտանելիության պահանջի՝ ԾԳ-ն հնարավորություն է ընձեռում՝ հավելյալ շաբլոնների կիրառմամբ ապահովելու տարբեր տեսակի ՍԿԸՀ-ների մշակումը: Այդպիսի շաբլոնները անհրաժեշտ է, որ պարունակեն համապատասխան ՍԿԸՀ-ին հատուկ մուտքային նախնական տվյալներ: Տեխնոլոգիական տարբեր գործընթացների համար ծրագրում ավելացվել է նաև համապատասխան լրացուցիչ շաբլոն:

«MTC» ԾԳ-ն կազմված է մի քանի ենթածրագրերից և մոդուլների կցման համակարգից (նկ. 3.1):

Հիշողության կազմակերպման ճարտարապետության ստեղծում.

Հիշողության թարգմանչի ենթածրագրով ստեղծվում է նախագծվող ՍԿԸՀ-ի կառուցվածքը՝ օգտվելով համապատասխան ֆայլերի տվյալներից և օգտագործողի տրված մուտքային տվյալներից: Այս ենթածրագիրը պարունակում է նաև ստեղծված արագործության բարձրացման մշակման մեթոդների իրականացումը: Առաջին հերթին՝

ստեղծվում է սխեմայի ընդհանուր ճարտարապետության կառուցվածքը, այսինքն՝ բաղադրիչ մասերի կապերն ու միացումները:




Նկ. 3. 1 Արագագործ հիշասարքերի ավտոմատացված մշակման ծրագրային գործիքի կառուցվածքը

Սա կառուցվում է համապատասխան մոդուլում առկա շաբլոնի հիման վրա՝ օգտագործելով օգտագործողի ներմուծած տվյալները: Օրինակ, օգտագործողը կարող է ներմուծել նախագծվող ՍԿԸՀ-ի ծավալի չափը, որի հիման վրա կկառուցվի ճարտարապետությունը: Ստեղծված ճարտարապետությունը շաբլոնի համաձայն բաժանվում է ենթաբլոկների: Կախված օգտագործողի կողմից ներմուծված տվյալներից՝ ծրագիրը կընտրի այնպիսի տարրական բջիջներ և դրանց համապատասխան այլ բաղադրիչ սխեմաներ, որոնք կապահովեն ընդհանուր ՍԿԸՀ-ի արագագործությունը:

ՍԿԸՀ-ի սխեմատեխնիկական բաղադրիչի ստեղծումը.

ԱԿԸՀ-ի սխեմատեխնիկական բաղադրիչը ստանալու համար մշակվել է ենթամոդուլ, որը, օգտվելով մուտքային տարրական բջիջների սխեմատեխնիկական գրադարանից, կառուցում է տարրական մակարդակի սխեմա: Որպես ելքային նկարագիր տրամադրում է սխեմատեխնիկական մակարդակի նկարագրությունը՝ HSPICE [104, 105] ստանդարտ ձևաչափով: Աստեղծված ՍԿԸՀ-ի կառուցվածքը պարունակում է բաղադրիչ բլոկների և դրանց միջմիացումների վերաբերյալ բոլոր տվյալները: Մոդուլի աշխատանքային ալգորիթմը պատկերված է ստորև (նկ. 3.2):




Նկ. 3.2. Սխեմատեխնիկական բաղադրիչի արտաձման մոդուլի աշխատանքային ալգորիթմը

ԱԿԸՀ-ի տոպոլոգիական բաղադրիչի ստեղծումը.

ԱԿԸՀ-ի ֆիզիկական նախագիծը կառուցվում է մի քանի փուլով (նկ. 3.3) [106-108]: Սկզբում տարրական բջիջների տոպոլոգիական գրադարանից, օգտագործողի կողմից տրված ԱԿԸՀ-ի կառուցման կանոններին համապատասխան, ընտրվում են, տարրերի ֆիզիկական նախագծերը: Ընտրությունը կատարվում է տեղաբաշխման ֆայլի միջոցով, որը կազմում է ԾԳ-ի փաթեթի մաս: Տեղաբաշխման ֆայլը պարունակում է ԱԿԸՀ-ի բաղադրիչ սխեմաների տեղաբաշխման կանոններ, և յուրաքանչյուր նոր ճարտարապետության համար այն ստեղծվում է նախապես:

Ըստ տեղաբաշխման կանոնների՝ օգտագործվել է ՍԿԸՀ-ի բաղադրիչ սխեմաների կցման մեթոդը: Կցման մեթոդը ներկայացնում է բաղադրիչների կառուցումը ըստ դրանց դիրքի հարևան բաղադրիչների նկատմամբ: Նախքան տեղաբաշխումը տոպոլոգիական գրադարանում պարունակվող բոլոր բաղադրիչների վրա ավելացվում է հատուկ արհեստական շերտ, ինչի շնորհիվ որոշվում են բաղադրիչների չափերը: Օրինակ, եթե ՍԿԸՀ-ի նախագիծը պարունակում է մի քանի տիպի բաղադրիչներ (նկ. 3.3), ապա, անկախ վերջնական նախագծի մեջ դրանց դիրքից, հնարավոր է կազմակերպել դրանց կապը: Տեղաբաշխման ֆայլում սահմանվում է բաղադրիչներից մեկը, որն ավտոմատ տեղադրվում է (0,0) կոորդինատում, իսկ մյուս բաղադրիչների դիրքը սահմանվում է այդ բաղադրիչի նկատմամբ:



Նկ. 3.3. Կցման մեթոդով բաղադրիչների տեղաբաշխումը

Ներկայացված կցման կանոնների հիման վրա օգտագործելով տեղաբաշխման ֆայլը՝ ԾԳ-ն որոշում է ՍԿԸՀ-ի բոլոր բաղադրիչների դիրքերը: ՍԿԸՀ-ի տոպոլոգիական նմուշի կառուցումն իրականացվում է 3.1.1-ում նշված OA-ի միջոցով:

Ընթերցման/գրանցման հապաղումների և հզորության գնահատումը.

Ստեղծած «MTC» ծրագրային միջոցը, ընթերցելով օգտագործողի կողմից տրված մուտքային տվյալները, դրանց հիման վրա արտածում է ընթերցման, գրանցման հապաղումների և հզորության արժեքները համապատասխան հիշասարքի համար: Ծրագիրն օգտագործում է նախապես ստեղծված վարքագծային աղյուսակային ֆայլը, որը պարունակում է բաղադրիչ սխեմաները և դրանց տրամաբանական մոդելները: Այդ ֆայլը ստանալու համար օգտագործվել է Synopsys ընկերության ստատիկ ժամանակային վերլուծության PrimeTime [109] գործիքը: Ծրագրի աշխատանքի արդյունքում ստացվում են ստատիկ վերլուծության արդյունքները, որոնք հիմնված են ՍԿԸՀ-ի բաղկացուցիչ սխեմաների՝ հայտնի և նախապես բնութագրված պարամետրերի արժեքների վրա:

3.1.3. Համապիտանի հիշողության թարգմանչի կառուցվածքը

Համապիտանի հիշողության թարգմանիչը ստեղծվում է նախագծողի կողմից և տրվում է ԾԳ-ին որպես մուտքային գրադարան: Այն ներկայացնում է տարբեր ֆայլերից կազմված փաթեթ: Բոլոր ֆայլերը տեղակայված են թարգմանչի անվանմանը թղթապանակում: Յուրաքանչյուր թարգմանչի թղթապանակ պարունակում է հետևյալ ֆայլերը (աղ. 3.1.):


Աղյուսակ 3. 1.

Հիշողության թարգմանչի գրադարանի պարունակությունը

Ֆայլի անվանումը	Պարունակությունը
«թարգմանչի_անուն».sp	ՍԿԸՀ-ի բոլոր բաղադրիչ սխեմաների սխեմատեխնիկական նկարագիրը: Այն նկարագրված է սխեմատեխնիկական մակարդակով «HSPICE» ստանդարտ ձևաչափով:
«թարգմանչի_անուն».gds	ՍԿԸՀ-ի բոլոր բաղադրիչ սխեմաների տոպոլոգիական նկարագիրը: Այն նկարագրված է «GDSII» ստանդարտ ձևաչափով

<p>«թարգմանչի_անուն».v</p>	<p>ՍԿԸՀ-ի բաղադրիչ տրամաբանական նկարագիրը, որն իրականացված է փականային մակարդակով: Այն նկարագրված է «Verilog» ստանդարտ ձևաչափով:</p>
<p>«թարգմանչի_անուն».place</p>	<p>Հիշասարքի կառուցվածքը, տեղաբաշխման կանոնները: Բաղկացած է ֆիզիկական և սխեմատեխնիկական նախագծման հրահանգներից: Այն նկարագրված է տեքստային ձևաչափով և ունի հատուկ ֆունկցիաների դասեր:</p>
<p>«թարգմանչի_անուն».lib</p>	<p>Հիշասարքի բաղադրիչ սխեմաների հապաղումների և հզորության տեղեկատվությունը:</p>
<p>«թարգմանչի_անուն».param</p>	<p>ՍԿԸՀ-ի կառուցման համար անհրաժեշտ հատուկ պարամետրերը և դրանց արժեքները:</p>
<p>«թարգմանչի_անուն».range</p>	<p>Բոլոր հիմնական պարամետրերի թույլատրման միջակայքի սահմանումը՝ բառերի, բիթերի, մուլտիպլեքսորների, բանկերի և այլն:</p>
<p>«թարգմանչի_անուն».tmp</p>	<p>ՍԿԸՀ-ի այլ նկարագրերի արտաձման շաբլոնները:</p>

ԾԳ-ն, իր հերթին, օգտագործելով մուտքագրված գրադարանը, արտաձում է համապատասխան ելքային ֆայլերը (նկ. 3.4):



Նկ. 3.4. Ելքային թղթապանակի կառուցվածքի օրինակը

3.1.4. Ծրագրային գործիքի օգտագործողի ինտերֆեյսը

Ներկայացված ծրագրային միջոցի համար ստեղծվել են օգտագործողի գրաֆիկական և ոչ գրաֆիկական ինտերֆեյսներ:

ՍԿԸՀ-ի կառուցումը կարող է ծախսել որոշ մեքենայական ժամանակ՝ կախված օգտագործողի կողմից տրված մուտքային տվյալներից:

Այն տատանվում է մի քանի րոպեից մինչև մի քանի տասնյակ րոպեներ, հետևաբար՝ նպատակահարմար է նաև ԾԳ-ում ներառել ոչ գրաֆիկական ինտերֆեյս: Այդ ինտերֆեյսի առավելությունն այն է, որ հրամանային տողով հնարավոր է փոխանցել առաջադրանքը ծրագրին, որը առանց օգտագործողի հավելյալ միջամտման, իրականացնում է ՍԿԸՀ-ի կառուցումը:

Սակայն ԾԳ-ում ներառվել է նաև գրաֆիկական ինտերֆեյս, որը ներկայացնում է երկխոսության պատուհան: Օգտագործողի կողմից պատուհանի համապատասխան դաշտերը լրացնելուն պես՝ ԾԳ-ն կատարում է ոչ գրաֆիկական ինտերֆեյսի համապատասխան հրամանները: ԾԳ-ի գրաֆիկական ինտերֆեյսում ներառված է նաև դինամիկ ստուգման համակարգը, որն իրական ժամանակում ստուգում է

օգտագործողի կողմից մուտքագրված տվյալների համապատասխանությունը հիշողության թարգմանչի թույլատրելի արժեքների հետ:

Ոչ գրաֆիկական ինտերֆեյս.

ԾԳ-ի ոչ գրաֆիկական ինտերֆեյսով հիշասարք գեներացնելու նպատակով Linux օպերացիոն համակարգում անհրաժեշտ է գրանցել հետևյալ հրամանը՝ MTC: Այդ հրամանի կանչի հիման վրա «MTC» ծրագրային գործիքը կգեներացնի ՍԿԸՀ:

Գործարկման հրամանն ունի հետևյալ տեսքը.

```
MTC -c ՍՈՒՏՔԱՅԻՆ_ԿՈՆՖԻԳՈՒՐԱՑԻՈՆ_ՖԱՅԼ -comp ԹԱՐԳՄԱՆՉԻ_ԳՐԱԴԱՐԱՆ
```

ԾԳ-ն հնարավորություն է տալիս նաև հրամանին որպես հավելյալ մուտքային տվյալ օգտագործել հետևյալ տարբերակները.

- dir - հնարավորություն է տալիս նշել ելքային արդյունքների թղթապանակը,
- help - արտաձուլ է էկրանին ծրագրից օգտվելու կանոնները,
- debug - թույլատրում է ՍԿԸՀ-ի կառուցման ընթացքում արտաձուլ էկրանին ԾԳ-ի աշխատանքային մոդուլների տվյալները,
- version - օգտագործվում է՝ արտաձուլելու համար ԾԳ-ի ընթացիկ տարբերակը:

Մուտքային կոնֆիգուրացիոն ֆայլը պարտադիր պետք է ներառի ՍԿԸՀ-ի կառուցման համար անհրաժեշտ նվազագույն մուտքային տվյալները, օրինակ, հիշասարքի բառերի գծերի քանակը, կարգային դողերի քանակը, հիշասարքի գրադարանի անվանումը, ելքային ՍԿԸՀ-ի անունը, հիշողության զանգվածի բանկավորման քանակը, գործընթացի անունը և ելքային ֆայլերի ձևաչափը: 3.1.3-ից պարզ դարձավ, որ ներկայացված ԾԳ-ով տարբեր ձևաչափերի ֆայլերի ստեղծման հնարավորությունը պահանջում է նաև մուտքային կոնֆիգուրացիոն ֆայլում սահմանել ՍԿԸՀ-ի ելքային ֆայլերի ձևաչափերը: Կոնֆիգուրացիոն ֆայլի յուրաքանչյուր տողն ունի սահմանվող պարամետրերի մեկական զույգ՝ ներկայացված հետևյալ տեսքով՝ «փոփոխական=արժեք»: Այդ փոփոխականների ճշգրիտ անվանումները գրանցված են

թարգմանչի գրադարանում գտնվող «գլոբալ պարամետրերի» ֆայլում: Մուտքային կոնֆիգուրացիոն ֆայլի օրինակում (նկ. 3.5) 1-3 տողերում սահմանված են ՍԿԸՀ-ի ծավալի տվյալները, «compiler_name» փոփոխականով տրվում է թարգմանչի գրադարանի անվանումը, որից և ԾԳ-ն վերցնում է հիշասարքի տեսակի տվյալները. «memory_name» բանալին հնարավորություն է տալիս անվանել կառուցված հի'ասարքը, իսկ «view_name»-ը սահմանում է ելքային ֆայլերի ձևաչափերը:

1.	NW = 256
2.	NB = 144
3.	BK = 2
4.	CM = 4
5.	compiler_name = "HS1P11_SRAM"
6.	memory_name = "64x8cm4bk2c1"
7.	pvt_name = { "sf0p61v125c_0p71v" }
8.	view_name = { "gds" "spice" "datasheet" }

Նկ. 3.5. Կոնֆիգուրացիոն ֆայլի օրինակը


Ստորև բերված են «MTC» ծրագային գործիքի բոլոր հասանելի փոփոխականների նշանակությունները.

- compiler_name - ստեղծվող ՍԿԸՀ-ի համար օգտագործվող թարգմանչի գրադարանի անվանումը,
- memory_name – ստեղծվող ՍԿԸՀ-ի անվանումը. օգտագործվում է ելքային ֆայլերի վերնագրման նպատակով,
- pvt_name – գործընթացի անվանումը, որը կօգտագործվի ելքային ՍԿԸՀ-ի հապաղումների ու հզորության մոդելների համար,
- view_name – սահմանում է ստեղծվող նախագծի ելքային ֆայլերի ձևաչափերը:


Օգտագործողի գրաֆիկական ինտերֆեյսը.

Օգտագործողի գրաֆիկական ինտերֆեյսի միջոցով հնարավոր հեշտությամբ է ստեղծել մուտքային կոնֆիգուրացիոն ֆայլը՝ առանց տիրապետելու մուտքային փոփոխականների թույլատրվող շարահյուսություններին: Ստեղծված ինտերֆեյսը ներկայացնում է երկխոսության պատուհան, որը պարունակում է մի քանի ենթապատուհաններ: Ստորև ներկայացված է հիմնական պատուհանը (նկ. 3.6): Այն

պարունակում է նոր նախագծի ստեղծման դաշտերը՝ նախագծի անվանման, թարգմանչի ընտրման և ելքային արդյունքների տեղակայման դաշտերը:



Նկ. 3.6. ԾԳ-ի գրաֆիկական ինտերֆեյսի թարգմանչի ընտրման պատուհանի տեսքը
Լրացնելով համապատասխան դաշտերը և սեղմելով «ok» կոճակը, կհայտնվի
հիշասարքի պարամետրերի ներմուծման պատուհանը (նկ. 3.7):




Նկ. 3.7. ԾԳ-ի գրաֆիկական ինտերֆեյսի հիշասարքի պարամետրերի ներմուծման
պատուհանի տեսքը

Այն պարունակում է «Number of Words», «Number of Bits», «Number of Banks», «PVT name», «Center Decode» արժեքների ներմուծման դաշտերը:


Երկխոսության պատուհանն ունի հավելյալ երկու ենթապատուհաններ, որոնք պատասխանատու են ելքային ֆայլերի կառավարման և մատույցների անվանափոխման համար:

«Views» ենթապատուհանը պարունակում է ելքային ֆայլերի կառավարման վանդակները («SPICE», «GDSII», «Datasheet», «Verilog Netlist» և այլն) (նկ. 3.8): Լռելյայն կառուցելով հիշասարքը՝ ԾԳ-ն արտաձում է «SPICE» և «GDSII» ձևաչափերով ֆայլերը:

Երրորդ ենթապատուհանը պարունակում է մուտքային և ելքային մատույցների անվանափոխության պատուհանը (նկ. 3.9), որը կազմված է երկու սյուններից: Առաջին սյան մեջ տեղադրված են այն փոփոխականների անունները, որոնք օգտագործված են թարգմանչի տեղաբաշխման ֆայլում: Երկրորդ սյան մեջ հնարավոր է մուտքագրել ցանկացած անվանում: Այս պատուհանը հնարավորություն է տալիս օգտագործողին՝ փոխելու ցանկացած մատույցի անվանումն ըստ պահանջի:




Նկ. 3.8. ԾԳ-ի գրաֆիկական ինտերֆեյսի ելքային ֆայլերի ձևաչափերի կառավարման պատուհանի տեսքը



Նկ. 3.9. ԾԳ-ի գրաֆիկական ինտերֆեյսի ելքային և մուտքային մատույցների կառավարման պատուհանի տեսքը

Լրացնելով բոլոր պարամետրերի արժեքները և սեղմելով «Finish» կոճակը՝ ԾԳ-ն սկսում է ՍԿԸՀ-ի կառուցման գործընթացը (նկ. 3.10):



Նկ. 3.10. ԾԳ-ի գրաֆիկական ինտերֆեյսի ՍԿԸՀ-ի կառուցման գործընթացը

Այսպիսով, ԾԳ-ի գրաֆիկական ինտերֆեյսը կառուցում է մուտքային կոնֆիգուրացիոն ֆայլը, և ինչպես նշվեց նախորդ ենթաբաժնում, փոխանցում է այդ ֆայլը ոչ գրաֆիկական ինտերֆեյսին:

3.2. Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցի արդյունավետության գնահատումը

Ստատիկ կամայական ընտրությամբ հիշասարքերի արագագործության բարձրացման միջոցների արդյունավետությունը գնահատելու նպատակով ստեղծված «MTC» ծրագրային գործիքով կառուցվել են տարբեր չափերի և տեսակների ՍԿԸՀ-ներ: Այդ ՍԿԸՀ-ները համեմատվել են առանց արագագործության բարձրացման մեթոդների կիրառման ՍԿԸՀ-ների հետ: Համեմատության նպատակով որպես ծրագրի մուտքային գրադարան ստեղծվել են երեք տարբեր թարգմանիչներ՝ հետևյալ մոտեցումներով:

ՍԿԸՀ թարգմանչի առաջին գրադարանն իրագործված է՝ առանց 2.2.2-ում, 2.2.4-ում և 2.2.5-ում ստեղծված հատուկ սխեմաների: Այսինքն՝ դրանում օգտագործված է մեկ սնուցման դող, որպես տարրական բջիջ ընտրված է 6S տիպի բջիջը [110], արագագործ նախալիցքավորման սխեմայի փոխարեն օգտագործված է սովորական նախալիցքավորման սխեմա, բացակայում է նաև ինքնաժամանակաչափ սխեման: Այս թարգմանչի անվանումն է «LS1p11_SRAM»:


ՍԿԸՀ թարգմանչի երկրորդ գրադարանն իրագործված է 2.2.2-ում, 2.2.5-ում առաջարկված սխեմաների միջոցով, բայց առանց լավարկված արագագործ նախալիցքավորման սխեմայի: Այս թարգմանչի անվանումն է «HS1p11_SRAM_NO_PRCH»:

ՍԿԸՀ թարգմանչի երրորդ գրադարանն իրագործված է 2.2.2-ում, 2.2.4-ում և 2.2.5-ում ստեղծված հատուկ սխեմաների միջոցով: Այն օգտագործում է լավարկված արագագործ նախալիցքավորման սխեման, բազմակի դողերով սնուցումը, ՍԴԴ-ներով հիշողության զանգվածը և ինքնաժամանակաչափ սխեման: Այս թարգմանչի անվանումն է «HS1P11_SRAM»: Ստացված թարգմանչի գրադարաններից յուրաքանչյուրով ԾԳ-ի միջոցով կառուցվել են 43 ՍԿԸՀ-ներ՝ նույնական հիշողության

ծավալներով: ԾԳ-ի աշխատանքի համար յուրաքանչյուր թարգմանչի գրադարաններում մշակվել են տեղաբաշխման ֆայլեր, որոնց միջոցով նախագծվում են նույն ճարտարապետությամբ տարբեր չափերի ՍԿԸՀ-ներ:

Տեղաբաշխման ֆայլերի ստեղծման նպատակով որպես հիմք օգտագործվել է առկա փորձնական ՍԿԸՀ-ի կլաստերը, որը ներկայացված է 2.5-ում: Վերը նշված երրորդ հիշողության թարգմանչի գրադարանը՝ «HS1p11_SRAM» իրականացված է 2.1-2.5-ում առաջարկված բոլոր մեթոդներով, երկրորդ գրադարանը՝ «HS1p11_SRAM_PRCH», իրականացված է նույն բջիջներով, բայց սովորական նախալիցքավորման սխեմայով, իսկ առաջին գրադարանն իրագործված է այլ տիպի տարրական բջիջներով: Այս գրադարանները ստեղծված են՝ գնահատելու համար առաջարկված մեթոդների արդյունավետությունը:

Նախագծած «HS1p11_SRAM» թարգմանչի տեղաբաշխման ֆայլը ստեղծվել է՝ օգտագործելով հետևյալ ընթացակարգը (նկ. 3.11):



Նկ. 3.11. Տեղաբաշխման ֆայլի ստեղծման ընթացակարգը

Տեղաբաշխման ֆայլում ցանկացած նկարագրության համար օգտագործվում է հատուկ տեքստային լեզու, որի շարահյուսության կառուցները ներդրված են ԾԳ-ում:

Ստորև բերված է տեղաբաշխման ֆայլում հիշողության զանգվածի նկարագրությունը: Հիշողության զանգվածը բաղկացած է տարրական հիշողության

բջիջներից, որոնք սահմանվում են որպես բլոկներ, իսկ դրանց քանակը ղեկավարվում է փոփոխականներով (նկ. 3.12):

```
(SET $NW = $db{NW_num})
(SET $NB = $db{NB_num})
(SET $BK = $db{Bank_num})
(SET $CD = $db{center_num})

(SET $ARRAY_CELL = $db{array4x4})
```

Նկ. 3.12. Տեղաբաշխման ֆայլում փոփոխականների սահմանման օրինակը

Հիշողության զանգվածի մեկ տողի կառուցման համար անհրաժեշտ է սահմանել հիշողության բջիջը որպես բլոկ՝ հայտարարելով սխեմատեխնիկական միջմիացումները և տոպոլոգիական սխեմայի տեղաբաշխումը (նկ. 3.13):

```
(BLOCK bitcell_io
(PIN vdda SINGLE INOUT)
(PIN vdd SINGLE INOUT)
(PIN vss SINGLE INOUT)
(PIN bb BUS [3:0] INOUT)
(PIN bt BUS [3:0] INOUT)
(PIN w1 BUS [3:0] INOUT)

(PLACE $ARRAY_CELL)

(CONNECT
(X_bitcell_io
vdda vdd vss
bb[0] bb[1] bb[2] bb[3]
bt[0] bt[1] bt[2] bt[3]
w1[0] w1[1] w1[2] w1[3]
$ARRAY_CELL))
)

(BLOCK bitcell_tier
(PIN vdda SINGLE INOUT)
(PIN vdd SINGLE INOUT)
(PIN vss SINGLE INOUT)
(PIN bb BUS [$NB - 1:0] INOUT)
(PIN bt BUS [$NB - 1:0] INOUT)
(PIN w1 BUS [3:0] INOUT)

(PLACE_X $NB $bitcell_io)

(FOREACH X [0 : $NB - 1 : 1]
(SET L = 4 * X)
(SET H = L + 3)
```


```

(X_bitcell_tier_[X]
  vdda vdd vss
  bb[H:L] bt[H:L]
  wl[3:0]
  $bitcell_io) )

```

Նկ. 3.13. Հիշողության զանգվածի մեկ տողի օրինակը

Այսպիսով, իմանալով մուտքային տվյալները, տեղաբաշխման ֆայլում նկարագրված զանգվածի տողի կառուցվածքը կունենա հետևյալ տեսքը (նկ. 3.14): Օգտագործելով նույն տրամաբանությունը, հայտարարվում են նաև ՍԿԸՀ-ի մյուս բաղադրիչ սխեմաները՝ որպես բլոկներ, և բոլորը համատեղվում են մեկ ընդհանուր բլոկում, որը ներկայացնում է վերջնական ՍԿԸՀ-ն:



Նկ. 3.14. Տեղաբաշխման ֆայլի միջոցով ստացվող հիշողության զանգվածի մեկ տողի սխեմատեխնիկական կառուցվածքը

Ստորև բերված է տեղաբաշխման ֆայլի օրինակը, որտեղ նկարագրված են փոփոխականների և բաղկացուցիչ սխեմաների սահմանումները:

- 1 (PLACEMENT_FILE HS1P11_SRAM
- 2 (BLOCK VARIABLES
- 3 (SET \$center_decode = \$db{center_decode}))

```

4   (SET $dual_supply      = $db{vdda_enable})
5   (SWITCH $dual_supply : ACTION
6   (CASE 0  : (SET $vddh_name = $vdd_name) )
7   (CASE 1  : (SET $vddh_name = $db{vdda_name})))
8   (SET $BK      = $db{BK})
9   (SET $NW      = $db{NW})
10  (SET $NB      = $db{NB})
11  (SET $CM      = $db{CM})
12  (SET $PC = $NB * $CM)
13  (SET $PR = $NW / $CM)
14  (SET $PR_BK = $PR / $BK)
15  (SET $cps = $PC / (1 + $center_decode))
16  (SET $pr_xdec = 4)
17  (SET $xdec_bk = $PR_BK / $pr_xdec)
18  (SET $NADDR = LOG($NW))
19  (SET $naddr_y = LOG($CM))
20  (SET $vss_name = $db{vss_name})
21  (SET $vdd_name = $db{vdd_name})
22  (SET $qa_name = $db{do_name})
23  (SET $adra_name = $db{addr_name})
24  (SET $da_name = $db{di_name})
25  (SWITCH $CM : $GIO $GPIN_IO_BIST
26  (CASE 4 : global_io4x1 io4x1_pin )
27  (CASE 8 : global_io8x1 io4x1_pin )
28  (CASE 16 : global_io16x1 io4x1_pin )
29  )
30  (SET $REF_CEN = $db{"refctrl"})
31  (SET $SAC_CEN = $db{"sactrl"})
32  (SET $MUX_CEN = $db{"muxctrl"})
33  (SET $GIO_IO = $db{$GIO})
34  (SET $GLOBAL_CEN = $db{"global_ctrl"})
35  (SET $PIN_CEN = $db{$PINCEN})

```

```

36 (SET $DECODER = $db{"dec"})
37 (SET $DECODER_BUFFER = $db{"buf"})
38 (SET $REF_BUFFER = $db{"refbuf"})
39 (SET $MUX_BUFFER = $db{"muxbuf"})
40 (SET $SAC_BUFFER = $db{"sacbuf"})
41 (SET $GIO_BUFFER = $db{"global_buf"})
42 (SET $PIN_BUF_R = $db{$PIN_BUFFER})
43 (SET $ARY_TILE = $db{"array4x4"})
44 (SET $MUX_TILE = $db{"mux4x1"})
45 (SET $SAMP_TILE = $db{"sac4x1"})
46 (SET $REF_TILE = $db{"rarray2x4"})
47 (SET $REF_RET = $db{"rarray_ret2x4"})
48 (SET $PIN_TILE = $db{$PIN_IO})
49 (SET $PIN_TILE_SCH = $db{$GPIN_IO})
50 (BLOCK array_io
51 (PIN vdda vdd vss SINGLE INOUT)
52 (PIN bb BUS [$CM - 1:0] INOUT)
53 (PIN bt BUS [$CM - 1:0] INOUT)
54 (PIN wl BUS [3:0] INOUT)
55 (PLACE_X $ARY_TILE) $CM / 4
56 (FOREACH X [0 : $CM / 4 - 1 : 1 ]
57 ($B0 = 4 * X) ($B1 = $B0 + 1) ($B2 = $B1 + 1) ($B3 = $B2 + 1)
58 (X_ary_[X] : vdda vdd vss bb[$B0] bb[$B1] bb[$B2] bb[$B3] bt[$B0]
59 bt[$B1] bt[$B2] bt[$B3] wl[0] wl[1] wl[2] wl[3] $ARY_TILE)
60 )

```

Առաջին «VARIABLES» բլոկում հայտարարված են սխեմայի կառուցման համար անհրաժեշտ բոլոր մուտքային փոփոխականները: Տեղաբաշխման ֆայլում օգտագործողի կողմից մուտքագրված տվյալները փոխանցվում են տեղաբաշխման ֆայլ՝ պարամետրերի տեսքով (\$NB, \$NW և այլն), որոնք, կախված մուտքային տվյալներից, կարող են փոխվել ՍԿԸՀ-ի նախագծի կառուցման ընթացքում: ՍԿԸՀ-ի

բաղադրիչ սխեմաները կանչվում են տվյալների հենքերից և հայտարարվում են որպես փոփոխականների արժեքներ (\$DECODER, \$ARY_TILE և այլն):

Սխեմայի վերին մակարդակի և բաղադրիչ սխեմաներից մեկի կառուցվածքները բերված են ստորև:

```
1 (BLOCK array_segment1_rt
2 (PIN vdda vdd vss INOUT)
3 (PIN bb BUS [$CM * $NBR - 1 : 0] INOUT)
4 (PIN bt BUS [$CM * $NBR - 1 : 0] INOUT)
5 (PIN wl BUS [3:0] INOUT)
6 (PLACE_X
7 (PLACE 1 $DECODER_BUFER)(PLACE $NBRS1 array_io) ) $NBR + 1
8 (FOREACH VI[0 : $NBR - 1 : 1]
9 ($VL = $CM * VI) ($VH = VL + $CM - 1)
10 (Xary_t_[VI] vdda vdd vss bb[VH:VL] bt[VH:VL] wl[3:0] array_io)
11 )
12 (CALL (XWLBUF $DECODER_BUFER))
13 )
14 (BLOCK ary_rt
15 (PIN vdda vddpi vddwl vss INOUT)
16 (PIN bb BUS [$CM * $NBR - 1 : 0] INOUT)
17 (PIN bt BUS [$CM * $NBR - 1 : 0] INOUT)
18 (PIN wlb BUS [$xdec_bk * 4 - 1 : 0] INPUT)
19 (PLACE_X array_segment1_rt)
20 (FOREACH VI[1 : 1 : 1]
21 ($LSB = 0 )
22 ($MSB = $NBR)
23 (X_array_segment1_rt[VI] vdda vddp vddwl[VI] vss
24 bb[$CM * MSB - 1 : $CM * LSB] bt[$CM * MSB - 1 : $CM * LSB]
25 wl[$xdec_bk * 4 - 1 : 0] wlb[$xdec_bk * 4 - 1 : 0]
26 array_segment1_rt)
27 )
28 )
```

```

29 (BLOCK $instance_name
30 (PIN $qa_name BUS [$NB - 1:0] OUTPUT)
31 (PIN $vddh_name SINGLE INOUT ? $dual_supply)
32 (PIN $vddp_name SINGLE INOUT)
33 (PIN $vss_name SINGLE INOUT)
34 (PIN $adra_name BUS [$NADDR - 1:0] INPUT)
35 (PIN $da_name BUS [$NB - 1:0] INPUT)
36 (PIN $wea_name SINGLE INPUT)
37 (PIN $mea_name SINGLE INPUT)
38 (PIN $clk_name SINGLE INPUT)
39 (CONNECT (X_top_instance
40 $qa_name[$NB - 1:0]
41 $vddh_name
42 $vddp_name
43 $vss_name
44 $adra_name[$NADDR - 1:0]
45 $da_name[$NB - 1:0]
46 $mea_name
47 $clk_name
48 $top_lay))
49 )

```

Բլոկի անվանումը փոփոխական է (\$instance_name), որը տրվում է օգտագործողի կողմից՝ մուտքային կոնֆիգուրացիոն ֆայլի միջոցով: Ավելի բարձի մակարդակի բլոկներում ՍԿԸՀ-ի բաղադրիչ սխեմաների նկարագրությունը կախված է այլ պարամետրերից (օրինակ՝ 10 տողում հիշողության զանգվածի մեկ տողում հայտարարված հիշողության բջիջների քանակը կառավարվում է 8 և 9 տողերում հայտարարված փոփոխականներով՝ \$NBR և \$CM):

Երկրորդ փուլում սահմանվում են ՍԿԸՀ-ի բաղադրիչ սխեմաների բլոկների կցմամբ տեղաբաշխման կանոնները, որոնք անհրաժեշտ են ՍԿԸՀ-ի վերջնական տոպոլոգիայի ստացման համար: Այդ կանոնների նկարագրման համար ԾԳ-ում ստեղծվել են հատուկ ձևաչափի ֆունկցիաներ, որոնք օգտագործվում են

տեղաբաշխման ֆայլում (նկ. 3.15):

```

1. (PLACE_X (PLACE 1 $DECODER_BUFER) (PLACE $NBR$1 array_io) )
   $NBR + 1
2. (PLACE_Y (PLACE 1 pin_tier) (PLACE 1 gio_tier) ) 2
3. (PLACE_Y (PLACE sac_tier) (PLACE mux_tier) (PLACE ary_tier)
4. (PLACE ref_tier) ) 4 * $bkone
5. (PLACE_Y (PLACE ary_tier MX) (PLACE mux_tier MX)
6. (PLACE sac_tier) (PLACE mux_tier) (PLACE ary_tier)
7. (PLACE ref_tier) ) 6 * $bk2

```

Նկ. 3.15. Ֆիզիկական նախագծի կանոնների օրինակը

Բլոկների ֆիզիկական տեղաբաշխումն իրականացվում է՝ օգտագործելով երկու տիպի ֆունկցիաներ՝ «PLACE» և «PLACE_*»: Այս ֆունկցիան սահմանում է բջիջների գտնվելու վայրը և կողմնորոշումը, որը պետք է տեղադրվի բլոկի մեջ:

«PLACE» ֆունկցիան հետևում է հետևյալ ձևին.

```

(PPLACE <բջջի/բլոկի աճուճ> <գտնվելու վայրը> [ <կողմնորոշում>] )

```

Ձևաչափում ներկայացված են.

- «բջջի կամ բլոկի անունը» - կարող է լինել փոփոխական կամ անվանում,
- «գտնվելու վայրը» - ունի «X» և «Y» կոորդինատներ, որոնք սահմանում են բջջի կամ բլոկի գտնվելու վայրը արտաքին բլոկի համեմատ:

Այս հայտարարությունները թույլ են տալիս հետևյալ գործողությունների իրականացումը՝ գումարում, հանում բազմապատկում և բաժանում:

Արգումենտները կարող են լինել թվեր կամ փոփոխականներ,

- «կողմնորոշումը» - կարող է ներառել պտույտ և հայելային իրականացում:


Օրինակ.

```


(BLOCK SRAM
  (PLACE $DECODER 0 0 R90 MX)
  (PLACE IO HEIGHT($DECODER) + 1 0)
  (PLACE CORE HEIGHT($DECODER) - 2 HEIGHT(IO))
)

```

Առաջին հայտարարության միջոցով ԾԳ-ն տեղաբաշխում է «\$DECODER» բլոկը (0,0) կոորդինատում (նկ. 3.16 ա), ապա պտտում է այն 90°-ով (նկ. 3.16 բ) և «X» առանցքի շուրջ հայելային պտույտ կատարում (նկ. 3.16 գ):



Նկ. 3.16. «PLACE» ֆունկցիայի միջոցով «\$DECODER» բլոկի իրականացումը
 Մնացած հայտարարությունները հանգեցնում են հետևյալ տեսքի տեղաբաշխմանը (նկ. 3.17):



ՄԻ. 3.17. Օրինակում բերված բլոկների նկարագրությունը

«PLACE_X» և «PLACE_Y» ֆունկցիաները հայտարարում են բլոկներից կամ բջիջներից կազմված զանգվածներ, սկսված ընթացիկ բլոկի (0,0) կոորդինատից:

«PLACE_X»-ը ստեղծում է միաչափ զանգված «X» առանցի վրա, իսկ «PLACE_Y»-ը կատարում է նույնը «Y» առանցքի վրա: Այս երկու ֆունկցիաների օգտագործումը հնարավորություն կտա ստեղծել ուղղանկյուն կառուցվածքներ: Ֆունկցիաներն ունեն հետևյալ հայտարարման տեսքը.


```
(PLACE_X/_Y <բջջի/բլոկի անուն> <թիվ> [ <կողմնորոշում> ] )
```

այստեղ, ի տարբերություն նախորդ ֆունկցիայի, ավելանում է «թիվ» արգումենտը, որը

սահմանում է բջիջը կամ բլոկը մի քանի անգամ կրկնելու քանակը «X» կամ «Y» ուղղությամբ: Այն կարող է ներկայացվել ինչպես թվի այնպես էլ փոփոխականի, տեսքով (նկ. 3.18).

```
(PLACE_X $DECODER 6 R90 MY)
```

Երրորդ փուլում սահմանվում են ՍԿԸՀ-ի բաղադրիչ սխեմաների սխեմատեխնիկական նկարագրությունների միջմիացումների կանոնները, որոնք անհրաժեշտ են ՍԿԸՀ-ի սխեմատեխնիկական նախագծի ստացման համար:



Նկ. 3.18. «X» առանցքով բլոկների դասավորվածությունը

Միջմիացումների կանոնների նկարագրման համար մշակվել են հատուկ ֆունկցիաներ: Ինչպես ֆիզիկական նախագծի դեպքում, բլոկների կամ բջիջների քանակներն այստեղ տրվում են փոփոխականներով, որոնց արժեքների տեղադրմամբ կարելի է ստանալ անհրաժեշտ ՍԿԸՀ-ի սխեմատեխնիկական նախագիծը: Այդ ֆունկցիաները երկուսն են՝ «CONNECT» և «FOREACH», որոնց շարահյուսության տեսքը նկարագրված է ստորև:

```
(CONNECT (<ենթասխեմայի_հայտարարությունը>))
(FOREACH <փոփոխական> <միջակայք> (<ենթասխեմայի_հայտարարությունը>))
```

Ներկայացված ֆունկցիաների շարահյուսություններում.

«ենթասխեմայի_հայտարարությունը» - ներկայացնում է ցածր մակարդակի սխեմայի մատույցների հայտարարությունը՝ ըստ հերթականության, «փոփոխական» - այս արգումենտով տրվում է փոփոխականը, որի արժեքը կփոխվի ըստ տրված միջակայքի, «միջակայք» - տրվում է այն միջակայքը, որի միջոցով հնարավոր է ղեկավարել տեղադրվող բլոկների կամ ենթասխեմաների քանակը:

Մյուս երեք փուլերում սահմանած բոլոր բլոկները կառուցվում են տողի տեսքով՝ օգտագործելով համապատասխան ֆունկցիաները, ապա տեղադրվում են սյան մեջ՝ ստանալով ՍԿԸՀ-ի վերջնական կառուցվածքը:

Տեղաբաշխման ֆայլի ստեղծումից հետո անհրաժեշտ է ստեղծել նաև հապաղումների և հզորությունների տվյալների գրադարանը, որը ներկայացնում է վարքագծային աղյուսակային ֆայլը: Այդ ֆայլը ստեղծվում է բնագավառում առկա և լայնորեն տարածված ծրագրային միջոցների շնորհիվ:

Նույն ընթացակարգով ստեղծվել են նաև մյուս հիշողության թարգմանիչների տեղաբաշխման և վարքագծային աղյուսակների ֆայլերը: Ստորև բերված են ստեղծված «LS1p11_SRAM» (աղ. 3.2), «HS1p11_SRAM_NO_PRCH» (աղ. 3.3) և «HS1P11_SRAM» (աղ. 3.4) հիշողության թարգմանիչներով «MTC» ծրագրային գործիքի միջոցով նախագծված ՍԿԸՀ-ների հիմնական պարամետրերի արժեքները:

Ստացված ՍԿԸՀ-ների երկու խմբերը համեմատվել են «LS1p11_SRAM»-ի հետ՝ ըստ հիմնական պարամետրերի՝ գրանցման/ընթերցման հապաղման, ստատիկ/դինամիկ էներգասպառման և զբաղեցրած մակերեսի:

Ինչպես երևում է «HS1p11_SRAM_NO_PRCH» հիշողության թարգմանչով ստացված արդյունքներից (աղ. 3.3), մշակված մեթոդի կիրառումն ապահովում է նախագծված սխեմաների գրանցման և ընթերցման հապաղումների համապատասխանաբար մոտ 2-10%-ով և 15-25%-ով կրճատում՝ դրանց էներգասպառման մեջ ընդամենը գրանցման մոտ 2-6%-ով, ընթերցման մոտ 3-22%-ով և կիսահաղորդչային բյուրեղի վրա զբաղեցրած մակերեսի մոտ 6-13%-ով կորստի պարագայում՝ համեմատած «LS1p11_SRAM» թարգմանչով ստացված արդյունքների հետ:

«HS1P11_SRAM» թարգմանչով նախագծված ՍԿԸՀ-ներում մակերեսը լրացուցիչ աճում է մոտ 1-3%-ով, իսկ ծախսվող հզորությունը գրանցման ռեժիմում մոտ 2-12%-ով, ընթերցման ռեժիմում՝ մոտ 1-4-ով՝ ի հաշիվ առաջարկված ԱՆՍ-ի օգտագործման, ապահովելով լրացուցիչ գրանցման և ընթերցման հապաղումների համապատասխանաբար մոտ 2-11%-ով և 5-10%-ով կրճատում: Մակերեսի շահումը,

բանականաբար, փոքր է մեծ ընդհանուր մակերես ունեցող սխեմաներում, քանի որ դրանցում ԱՆՍ -երի զբաղեցրած մակերեսի փոքրացումը զգալի դեր չի խաղում:

Այսպիսով, առաջակված ՍԿԸՀ-ների արագագործության բարձրացման մեթոդը, որի դեպքում օգտագործվում են նոր տեսակի բաղկացուցիչ սխեմաներ՝ ՍԴԴ-եր և ԻԺՍ-եր և ԱՆՍ-եր, թույլ է տալիս ապահովել արագագործության բարձրացում՝ գրանցման գործողության դեպքում մոտ 4-21%-ով և ընթերցման գործողության դեպքում մոտ 18-32%-ով՝ գրանցման 4-19%-ով և ընթերցման 8-30%-ով էներգասպառման ծախսի, ինչպես նաև մակերեսի 6-15%-ով թույլատրելի կորուստների պարագայում:

Աղյուսակ 3. 2

«LS1p11_SRAM» հիշողության թարգմանչի հիշասարքերի պարամետրերը

Հիշասարք	Հապաղում (սկ)		Ընդ. սպառվող հզորություն (մկվտ)		Մակերես (մկմ ²)	Գր. ժ. շահում (%)	Ընթ. ժ. շահում (%)	Էներգասպառման կորուստ (%)		Սակերեսի կորուստ (%) (մկմ)
	Գրանցում	Ընթերցում	Գրանցում	Ընթերցում				Գրանցում	Ընթերցում	
SRAM_64x8c4b2cd1	738	773	0,29	0,25	467,37	-	-	-	-	-
SRAM_64x40c4b2cd1	774	787	0,84	0,58	1331,21	-	-	-	-	-
SRAM_64x80c4b2cd1	912	818	1,59	1,04	2411,01	-	-	-	-	-
SRAM_96x8c4b2cd1	739	773	0,29	0,25	497,18	-	-	-	-	-
SRAM_96x40c4b2cd1	774	787	0,87	0,59	1413,73	-	-	-	-	-
SRAM_96x80c4b2cd1	912	819	1,65	1,07	2559,43	-	-	-	-	-
SRAM_128x8c4b2cd1	739	773	0,31	0,26	525,63	-	-	-	-	-
SRAM_128x40c4b2cd1	774	787	0,91	0,62	1492,50	-	-	-	-	-
SRAM_128x80c4b2cd1	912	819	1,71	1,09	2701,10	-	-	-	-	-
SRAM_160x8c4b2cd1	769	772	0,31	0,26	554,08	-	-	-	-	-
SRAM_160x40c4b2cd1	804	781	0,93	0,63	1571,27	-	-	-	-	-
SRAM_160x80c4b2cd1	930	805	1,75	1,12	2842,76	-	-	-	-	-
SRAM_192x8c4b2cd1	772	774	0,32	0,27	583,88	-	-	-	-	-

Աղ. 3.2-ի շարունակությունը

SRAM_192x40c4b2cd1	805	782	0,95	0,64	1653,79	-	-	-	-	-
SRAM_192x80c4b2cd1	930	802	1,80	1,15	2991,18	-	-	-	-	-
SRAM_224x8c4b2cd1	776	774	0,33	0,28	612,33	-	-	-	-	-
SRAM_224x40c4b2cd1	807	781	0,98	0,65	1732,56	-	-	-	-	-
SRAM_224x80c4b2cd1	931	798	1,85	1,17	3132,85	-	-	-	-	-
SRAM_256x8c4b2cd1	780	774	0,33	0,28	640,78	-	-	-	-	-
SRAM_256x40c4b2cd1	809	780	1,00	0,67	1811,33	-	-	-	-	-
SRAM_256x80c4b2cd1	932	797	1,89	1,20	3274,51	-	-	-	-	-
SRAM_288x8c4b2cd1	835	770	0,35	0,29	670,58	-	-	-	-	-
SRAM_288x40c4b2cd1	902	772	1,04	0,69	1893,85	-	-	-	-	-
SRAM_288x80c4b2cd1	951	784	1,95	1,23	3422,93	-	-	-	-	-
SRAM_320x8c4b2cd1	841	768	0,36	0,30	699,03	-	-	-	-	-
SRAM_320x40c4b2cd1	907	769	1,06	0,70	1972,62	-	-	-	-	-
SRAM_320x80c4b2cd1	955	779	2,01	1,26	3564,60	-	-	-	-	-
SRAM_352x8c4b2cd1	847	765	0,37	0,30	727,48	-	-	-	-	-
SRAM_352x40c4b2cd1	913	766	1,10	0,73	2051,39	-	-	-	-	-
SRAM_352x80c4b2cd1	958	774	2,07	1,29	3706,27	-	-	-	-	-
SRAM_384x8c4b2cd1	853	763	0,38	0,32	757,29	-	-	-	-	-
SRAM_384x40c4b2cd1	918	765	1,13	0,74	2133,91	-	-	-	-	-
SRAM_384x80c4b2cd1	961	770	2,13	1,32	3854,68	-	-	-	-	-
SRAM_416x8c4b2cd1	860	763	0,39	0,33	785,74	-	-	-	-	-
SRAM_416x40c4b2cd1	923	763	1,17	0,77	2212,68	-	-	-	-	-
SRAM_416x80c4b2cd1	964	765	2,20	1,36	3996,35	-	-	-	-	-
SRAM_448x8c4b2cd1	866	761	0,40	0,33	814,19	-	-	-	-	-
SRAM_448x40c4b2cd1	929	760	1,20	0,79	2291,45	-	-	-	-	-
SRAM_448x80c4b2cd1	967	762	2,26	1,39	4138,02	-	-	-	-	-
SRAM_480x8c4b2cd1	872	759	0,41	0,34	843,99	-	-	-	-	-
SRAM_480x40c4b2cd1	934	757	1,23	0,80	2373,97	-	-	-	-	-
SRAM_512x40c4b2cd1	940	754	1,27	0,83	2407,82	-	-	-	-	-

Աղ. 3.2-ի շարունակությունը

SRAM_512x80c4b2cd1	974	753	2,38	1,46	4428,10	-	-	-	-	-
--------------------	-----	-----	------	------	---------	---	---	---	---	---

Աղյուսակ 3. 3

«HS1p11_SRAM_NO_PRCH» հիշողության թարգմանչի հիշասարքերի պարամետրերը

Հիշասարք	Հապաղում (սվ)		Ընդ. սպառվող հզորություն (մկվտ)		Մակերես (մկմ ²)	Գր. ժ. շահում (%)	Ընթ. ժ. շահում (%)	Էներգասպառում ն կորուստ (%)		Սակերեսի կորուստ (%) (մկմ)
